

4918

ՊՊՊՈՁԻՑԻՈՆ ՀՈՍԱՆՔՆԵՐԸ

ՀԱՄ. ԿՈՄ. ԿՈԽԱԿՅՈՒԹՅԱՆ (Բ) ՆԵՐՍՈՒՄ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՅՈՒԹՅՈՒՆ
ՄՈՍԿՎԱ

1928

ՖԿՊ1
0-60

1928 N 916

15 JUL 2005

16 NOV 2009

M
12756
3KPI
0-60

U. U.

ՈՊՊՈՁԻՑԻՈՆ ՀՈՍԱՆԲՆԵՐԸ

ԴԱՄ. ԿՈՄ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ (Բ) ՆԵՐՍՈՒՄ

Փոխադրյան ուսերենից

ԵԽԵԼԻԿՈՏԵԱԿ
Института
разработки
и применения наук
СССР

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՌՈՒԹՅՈՒՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՄՈՍԿՎԱ, 1928

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներկուսակցական թեմումները յեվ նրանց աղբյուրները . . .	59
Հակալենինյան թեմումները մեր կուսակցության մեջ՝ պրոլետարիատի կողմից պետական իշխանությունը գրավելու ժամանեակ	61
Զախ կոմունիզմ	8
«Դեմուրատիկ ցենտրալիզմի խումբը»	13
Տրոցկիզմը յեվ բանվորական ռազպողիցիան նեպի ժեմքում .	18
1923 թ. տրոցկիստական ռազպողիցիան	22
«Նոր ռազպողիցիան»	29
1926 թ. միացյալ ռազպողիցիան	34
1927 թ. ռազպողիցիոն բլոկը	39
Քնն. Ստալինի կարծիքը ռազպողիցիայի մասին (հատվածներ նառից)	42
Համ. Կ. Կ. (Բ) XV համազումարի բանաձեկը ռազպողիցիայի մասին	50
Կոմինտե նի VI Կոնգրեսի թեմումնած բանաձեկը Տրոցկու, Ռադեկի, Սապրոնովի յեվ ուրիշների դիմումների առքի .	56
	61



Главлит № 98328
Тираж 3.000 экз.
Заказ 2132



56779.66

ՆԵՐԿՈՒՄԱԿՑԱԿԱՆ ԹԵՔՈՒՄՆԵՐԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Բոյլշեվիկյան կուսակցությունը պայքարի ահազին փորձառություն ունի. այդ պայքարը նա մղել է ընդդեմ բուրժուական և մանր-բուրժուական կուսակցությունների:

1917 թ. Հոկտեմբերյան հեղաշրջումից առաջ մեկ ու կես տասնյակ տարվա ընթացքում բոյլշեվիկյան կուսակցությունը պատմական տարբեր մոմենտներում ստիպված եր գնահատել այդ քաղաքական կուսակցությունների պլատֆորմները, ցուցադրել նրանց դասակարգային բնույթը, մերկացնել նրանց ծրագրի և տակտիկայի դասակարգային նշանակությունը և պարբերական մոլեգին պայքարի միջոցով ապահովել այդ հայացքների հաղթահարումը բանվորական և առհասսարակ աշխատավորների շրջանում։ Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո, յերբ իշխանությունը պրոլետարիատի ձեռքն անցավ և յերբ այդ պետության վլուխն անցավ կոմունիստական կուսակցությունը՝ բանվոր դասակարգի շահերի միակ ներկայացուցիչը, — բուրժուական և մանր-բուրժուական քաղաքական կուսակցությունները դրվեցին անլեզալ գոյության պայմանների մեջ։ Պրոլետարական պետության որդանները ամեն միջոց ձեռք ելին առնում, վրապեսզի վերջ դնեն պրոլետարական հեղափոխության թշնամի քաղաքական կուսակցություններին, թույլ չտան նրանց կազմակերպումն և գոյությունը, հարավորություն չտան նրանց թե բերանացի և թե մա-

մուլի միջոցով հականեղափոխական ազիտացիա և պրոպագանդ մղելու։ Լեզալ գոյություն և ունեցել և ունի միմիայն կոմունիստական կուսակցությունը, սակայն, ինարկե, այդ չի նշանակում, վոր խորհրդային յերկրում բուրժուական և մանր-բուրժուական շերտերն ամենեին չեն արտահայտում իրենց քաղաքական ձգտումներն և չունեն իրենց քաղաքական ծրագիրը։

Այդ ամենեին չի նշանակում, վոր, արգելելով բուրժուական և մանր-բուրժուական քաղաքական կուսակցությունները, խափանվեց և բուրժուազիայի ու մանր-բուրժուազիայի ազդեցությունը պրոլետարիատի վրա։ Հիշած ազդեցությունն արտահայտվում եր և արտահայտվում է, ի միջի այլոց, և նրանում, վոր կոմունիստական կուսակցության շարքերում մերթ ընդ մերթ ձևակերպվում են կուսակցական գծից դուրս թեքումներ և շեղումներ։ Ինքն ըստ ինքյան հասկանալի յե, վոր կուսակցական ծրագիրը, կուսակցական տակտիկան, բոյլշիկոյան տրագիաները անկարող ելին և անկարող են հաշտվելու բոյլշիզմի հիմնական սկզբունքներին պարզապես բացասաբար վերաբերվող ակներկ հակակուսակցական հոսանքների հետ։ Այսպիս, որինակ, բոյլշիկոյան կուսակցության մեջ չեր կարող տեղի ունենալ մի հոսանք, վոր բացարձակ, աներկբայ, պարզապես պրոլետարիատի դիկտատորայի սկզբունքի դեմ դուրս գար։ Թեև ներկուսակցական շեղումները լենինյան գծից, չելին արտահայտվում բացարձակ հարձակումներով բոյլշիկոյան ծրագրի սկզբունքների և բոյլշիկոյան տակտիկայի դեմ, — այնուամենայնիվ նրանք սքողված ձևով, ձախ ֆրազներով քողարկված, ըստ եյտիյան հակակուսակցական դիմ ունելին — արտահայտում ելին մանր-բուրժուազիայի ազդեցությունը պրոլետարիատի վրա։

Միամառություն ե կարծել, վոր պետական իշխանությունը պրոլետարիատի կողմից գրավելուց և ամրապնդվե-

լուց հետո, մեր կուսակցությունը, վոր միակ լեզալ կուսակցությունն ե, ապահովված ե մանր-բուրժուական իդեոլոգիայի ազդեցությունից։ Վոչ մի բոպե չպետք ե մոռանալ, վոր մեր յերկրում մանր-բուրժուական ազգաբնակչությունը գերակշռող ե, վոր այդ մանր-բուրժուազիան, ըստ շուկայի հարաբերությունների գարգացման չափի, իր միջից արտաբերում ե կապիտալիստական տիպի տարրեր, և վոր տնտեսական շինարարության, նաև խորհրդային հասարակակայնության բոլոր շրջաններում պրոլետարիատն և նրա կուսակցական ավանդարդը ամեն որ հանդիպում են մանր-բուրժուական հայացքների, տրամադրությունների, ձգտումների, սովորությունների, տրադիցիաների տարերային գրոհին։ ԽՍՀՄ տնտեսական զարգացման պրոցեսում անկասկած նկատվում ե սոցիալիստական ձևերի ավելի արագ աճումն, քան մասնավոր տնտեսական ձևերի, բայց այնուամենայնիվ վորոշ չափով աճում ե և մասնավոր կապիտալը, արագանում և նաև մանր-բուրժուական մասսաների մեջ կապիտալիստական շերտավորումների գոյացումն և ուժեղանում են կապիտալի դիրքերը մի շարք ասպարեզներում։

Այսպիսի պարագաներում, միակ լեզալ կոմունիստական կուսակցության մեջ արտահայտվելու յե (ինարկե խիստ քողարկված ձևով, ինչպես և մինչև այժմ ե արտահայտվել) մանր-բուրժուական տարրերի ազդեցությունը մեր կուսակցության ամենաանկայուն շերտերի վրա։ Լենինյան կուսակցությունը զարգացել ե վոչ միայն պրոլետարիատի ակնհայտ թշնամիների դեմ մղած պայքարում, նաև «կոփիել ե և զորացել» ներկուսակցական խմբերի ու հոսանքների դեմ պարբերաբար մղած պայքարի պրոցեսում, վորոնք (այդ խմբերն ու հոսանքները) փորձ ելին անում կուսակցությունը իսկական ուղիից վեր բերելու և որյեկտիվ կերպով հանդիսանում ելին իբրև պրոլետարիատի

վրա մանր-բուրժուական աղղեցություն տարածող արխեր։
Կուսակցության անդամը դաստիարակվում է, յերբ
յուրացնում է բոյլշեիկյան կուսակցության պատմական
պայքարի փորձը, ուսումնասիրում է ներկուսակցական
կյանքի պատմությունը, ընդունակ է դառնում կուսակ-
ցության ներսում տեղի ունեցող հակակուսակցական շե-
ղումները հաղթահարելու, նոր հոսանքների և խմբերի մեջ
հին, կուսակցությանը արդեն հայտնի, բայց նոր դիմակ-
ներով սքողված իդեյաները տարբերելու։ Ահա թե
ինչու կուսակցական կրթության ամենակարևոր տարրերից
մեկը պետք է կազմի ներկուսակցական հոսանքների
պատմության ծանոթությունը, հակաբոյլշեիկյան թեքում-
ների իդեյական դիրքերի և այդ թեքումների վերաբեր-
մամբ կուսակցության ունեցած հայեցակետերի ուսում-
նասիրությունը։

**ՀԱԿԱԼԵՆԻՆՅԱՆ ԹԵՔՈՒՄՆԵՐԸ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵջ՝
ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԿՈՂՄԻՑ ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒ-
ԹՅՈՒՆԸ ԳՐԱՎԵԼՈՒ ՄԻՋՈՑԻՆ**

Արդեն պրոլետարիատի դիկտատուրայի շեմքում, յերբ
կոմունիստական կուսակցությունը միակ լեզար կուսակ-
ցություն եր դառնում մեր յերկրում, բոյլշեիկների շըր-
ջանում լենինյան կուսակցական գծից շեղումներ յերևան
յեկան։

Հոկտեմբերյան հեղաշրջումից առաջ կուսակցության
մեջ մտավ տրոցկիստների մի խումբ, լ. Տրոցկու գըլ-
լսավորությամբ։ Այդ խումբը իր հետ բերեց վոչ-բոյլշեիկ-
յան վորոշ տրադիցիաներ, ինարկե այդ խումբը ձեւակա-
նալես ընդունեց թե կուսակցության ծրագիրն և թե կու-
սակցական տակտիկայի հիմունքները, սակայն ներկու-
սակցական հարաբերությունների հետագա զարգացումն

ապացուցեց, վոր այդ խմբի շատ ներկայացուցիչներ լիո-
վին չազատազրկեցին այն առանձին հայացքներից, վոր
ունեյին նրանք պատմական զարգացման մասին, դասա-
կարգերի փոխադարձ հարաբերությունների մասին, պրոլե-
տարական պերստեկտիվների մասին, հայացքներ, վորոն-
ցով արոցկիզմը անջատվում եր բոյլշեիկմից։ Տրոցկիզմն
իր հետ կուսակցության մեջ ըերեց նաև վոչ-լենինյան,
խեղաթյուրիված պատկերացումը կուսակցական կազմակեր-
պության սկզբունքների վերաբերմամբ։ Յեթե Հոկտեմ-
բերյան հեղաշրջման ժամանակ լ. Տրոցկին, լենինի և
մեր կուսակցության մյուս առաջնորդների հետ, ղեկավա-
րում եր ապստամբությունը և կոփմ։ իշխանության հա-
մար, յեթե այդ կովում նա ամբողջովին լենինի հետ
մնաց, յեթե այդ շրջանում, ինչպես և հետագա մի շարք
շրջաններում, նա շատ եր նպաստում, վոր կոփմն իշխա-
նության համար հաջող ավարտի, — ապա կուսակցական
զարգացման հետագա շրջաններում արոցկիզմը քանիցս
յելնում եր կուսակցության լենինյան դիրքերի դեմ, ջա-
նալով պատվաստել վերջինիս իր սիսալ հայացքները հեղա-
փոխության զարգացման և պրոլետարիատի պայքարի մե-
թողների վերաբերյալ։

Զախ ֆրազայի տակ, վորով քողարկվում եր տրոց-
կիզմը, և տարբեր ձեւերի տակ, վորոնցով նա արտահայտ-
վում եր զանազան ժամանակներում, ծածկված եր պրո-
լետարական հեղափոխության զարգացման վոչ-լենինյան
պատկերացում։ լ. Տրոցկին, ըստ բանի եյության ան-
կարելի յեր համարում սոցիալիզմի կառուցման ավարտումը
մեր յերկրում, նա յենթադրում եր, վոր իշխանությունն
իր ձեռքը գրաված պրոլետարիատը կարող է պահպանել
ու ամրապնդել այդ իշխանությունը և կարող է հաջո-
ղությամբ ոգտագործել այն՝ դեպի սոցիալիզմն դիմելու
համար՝ լոկ այն դեպքում, յեթե նրան ոգնության հասնի

իշխանությունն իր ձեռքը գրաված արևմտյան յելրոպական պրոլետարիատը։ Քանիցս շեշտելով պրոլետարիատի և գյուղացիության միջև տեղի ունեցած հակասությունների խորությունն ու ծավալը, նա յելնում եր նրանից, վոր այդ հակասությունները, համաշխարհային հեղափոխության ուշացման դեպքում, պատճառելու յեն պրոլետարական դիկտատուրայի պայթումն և անհնարին են գարձնելու սոցիալիզմի կառուցման ավարտումը մեր յերկրում։ Այդ, ինչպես հայտնի յե, արգելք չեղավ լ. Տրոցկուն Հոկտեմբերյան հեղաշրջման դեկավարներից մեկը հանդիսանալու։

Սակայն կուսակցության մեջ, իշխանության համար մղած կովի մոմենտին, յերևան յեկամ նոր հոսանք, վորը (ունենալով տրոցկիստական տեսակետին խիստ նման տեսակետ) տարբեր գործնական յեղրակացության հանգավ։ Հոկտեմբերյան հեղաշրջումից վոչ շատ առաջ, կուսակցության ներսում ձևակերպվեց մի հոսանք՝ ընկ. Կամենեկի և Զինովյեվի դեկավարությամբ. այդ հոսանքը յենթագրում եր, վոր Ռուսաստանում դեռ չեն հասունացել սոցիալիստական հեղափոխության համար պայմաններ, վոր այդ պայմանները նախապատրաստել են լոկ բուժուական-դեմոկրատիկ հեղափոխություն, և վոր իշխանությունը միմիայն պրոլետարիատի ձեռքն առնել և այդ իշխանությունը գլխավորել միմիայն բոյլշվիլյան կուսակցությամբ, այդ նշանակում ե անել մի խելառ քայլ՝ մեր հեղափոխության բնույթի մասին ունեցած սխալ պատկերացման վրա, պրոլետարիատի դերի և ուժի թերագնահատման վրա, մեր յերկրում մանր-բուրժուարզիայի դերի և նշանակության սակավ հաշվառման վրա հիմնված մի խելառ քայլ։ Այդ ընկերների դիրքը, ըստ քանի եյության, նշանակում եր, վոր նրանք չեն հավատում մեր յերկրում սոցիալիզմի կառուցումն ավարտելու համարվում էր:

ըության, և վոր նրանց համոզմունքով, պրոլետարիատի և գյուղացիության միջի հակասությունները անխուսափելի որեն ի չիք են գարձնելու բանվոր դասակարգի դիկտատուրան, և վոր, նրանց համոզմունքով, սոցիալիստական հեղափոխության համար Ռուսաստանում պատմական ժամը գեռ չի հասել։ Ընկ. Կամենեկի և Զինովյեվի այդ դիրքի գործնական յեղրակացությունն եր — նրանց յելույթը ընդդեմ Հոկտեմբերյան հեղաշրջման, ինչպես և հոգուտ այն բանի, վոր պետք ե խառն կառավարություն կազմել զանազան «խորհրդային կուսակցություններից», այսինքն խորհուրդներում մասնակցող կուսակցություններից (նաև մենշևկեներից, եսերներից, ենեսներից)։

Այդպիսով պրոլետարական դիկտատուրայի որրանից արգեն բոյլշվիլյան կուսակցության ներսում յերևան յեկան յերկու վորքիկ հոսանքներ, վորոնք այն մոմենտին երանց իդեալական դիրքերից տարբեր գործնական-քաղաքական յեղրակացություններ արին, ունենալով հանդերձ ընդհանուր յելակետներ։ Թե տրոցկիզմն և թե կամենեկի ու Զինովյեվի ներկայացրած հոսանքը յենում եյին այն հիմունքից, վոր մեր յերկրում սոցիալիզմի կառուցումն ավարտելը անհնարին ե, վոր մեր հետամնաց յերկրում պրոլետարական դիկտատուրայի կրախը անխուսափելի յե համաշխարհային հեղափոխության ուշանալու պայմաններում, և վոր պրոլետարիատի ու գյուղացիության միջի հակասություններն անխուսափելիորեն այնպիսի սուր կերպարանք են ստանալու, վոր անհնարին են գարձնելու սոցիալիզմին հաջողությամբ մերձենալը։ Կուսակցությունը յետ մղեց այդ թեքումներն և Լենինի դեկավարությամբ կարողացավ այդ հոսանքի դեկավարներին ընդհանուր կուսակցության դիրքերի վրա կանգնեցնել։ Մի շարք տարիների ընթացքում այդ իդեաները, վորոնք կազմում եյին այդ թեքումների պլատֆորմաների եյությունը, գաղտուկ,

Ճնշված դրության մեջ ելին գտնվում, վորպեսզի մի քանի տարուց հետո իբրև յելակետ ծառայեն նոր թեքումների և նոր խմբավորումների համար, վորպեսզի իբրև հիմք ծառայեն այն նոր ծրագրներին, վոր հակադրվում են բոյլ շեփմին և բոյլ կիցան կուսակցությանը:

Մեզ մոտ ընդունված ե տարբերել այսպես կոչված «ձախ» և այսպես կոչված «աջ» թեքումներ, և շատ հաճախ յենթադրում են, վոր «ձախ» թեքումն մի ինչ վոր ավելի սակալ վտանգավոր բան ե, ավելի մոտ ե բոյլ կիզմին, ավելի սակավ թշնամական ե լենինիզմին: Իսկ «ձախ» թեքումի ներկայացուցիչներն իրենք ամենուրեք սովորել են պարծենալ, վոր պատկանում են այդ թեքման, վորը իբր թե ավելի հեղափոխական ե քան բոյլ կիզմը, հավասարության նշան դնելով «ավելի ձախ» և «ավելի հեղափոխական» հասկացողությունների մեջ: Այնինչ կուսակցության պատմությունը մեզ այնքան առարկայական դասեր ե տվել «ձախ» թեքումների որյեկտիվ դերի և ֆասակարության վերաբերմամբ, վոր այժմ առանց տատանվելու կարելի յե պնդել, վոր «ձախ» և «աջ» թեքումների մեջ, մեկի և մյուսի որյեկտիվ նշանակության մեջ, սկզբունքային տարբերություն չկա: Պետք է շեշտել, վոր լենինը, դեռ իշխանությունը գրավելուց առաջ, թե «աջ» և թե «ձախ» թեքումները նույն թարափի վրա իր դասում: Բոլորը հիշում են, վոր ուեակցիայի ծանր տարիներում նա առաջարկում եր նույն թափով և նույն համառությամբ պայքարել թե լիկվիդատոր մենշեվիկների դեմ և թե «ձախ» լիկվիդատորների՝ այսպես կոչված «ձախ» բոյլ կիցների դեմ: Իսկ յերբ պրոլետարիատը իշխանությունն իր ձեռքը գրավեց, «ձախ» թեքումների որյեկտիվ վասակարությունը և հակասըլետարական բնույթը, նրանց՝ վոչ պակաս քան «աջ» թեքումների՝ վասակարությունը ավելի ակներկ դարձավ: Բոլորովին պարզ դարձավ, ո

վոր «ձախ» թեքումների յելագիրքը եյականապես չի տարբերվում «աջ» թեքումների յերագիրքից, վոր հեղափոխական ֆրազիոնգիան քողարկում ե նրանց վոչ-հեղափոխական ձգտումները, վոր այդ «ձախ» հոսանքներն ավելի հեղափոխական չեն, քան բոյլ կիցանները, այլ ընդհակառակն, դրանք ուղղված են պրոլետարիատի դեմ, լենինիզմի դեմ, և յեթե շարունակվեն, իրենց զարգացման պրոցեսում կարող են հականեղափոխական դեր խաղալ:

Զ Ա Խ Կ Ո Մ Ո Ւ Ն Ի Զ Մ

Հոկտեմբերյան հեղաշրջումից քիչ հետո կուսակցության ներսում յերեան յեկավ մի հոսանք, վոր կոչվում եր «ձախ» կոմունիզմ»: Այդ հոսանքը ձեակերպվեց Բըեստի դաշնի եպոխայում: Բոլորը հիշում են, վոր յերբ խորհրդային իշխանությունը հաստատվեց, նրան վիճակվեց հաշտություն կնքելու հարցը վճռել չափազանց ծանր և բարդ հանգամանքներում: Բոլորը հիշում են, վոր գերմանական իմպերիալիզմն ոգտվեց խորհրդային յերկրի տնտեսական քայլքայումով և ծանր կացությամբ և հաշտության այնպիսի պայմաններ առաջարկեց, վոր ուրիշ հանգամանքներում պրոլետարական պետությունը նույնիսկ չեր ել քննի: Ահա այդ պարագաներում կուսակցության ներսում մի հոսանք յերեան յեկավ վորը կուսակցության նույնիսկ այդ «խայտառակ» պայմաններով հաշտություն կնքելու ձբդառումը, վոր թելագրված եր խորհրդային իշխանությունը փրկելու և շունչ առնելու հնարավորություն տալու ցանկությամբ, համարեց վորպես պրոլետարիատի դասակարգային դիրքերից անջատում և մանր-բուրժուազիայի դիրքերին հարում:

«Դուք հաշտություն եք կնքում գերմանական իմպերիալիզմի հետ, դուք համաձայնության եք գալիս ամենա-

թունդ հականեղափոխության ներկայացուցիչների հետ, դուք մատնում եք այն նահանգների աշխատավորների լայն խավերի շահերը, վորոնք (նահանգները) ըստ հաշտության պայմանագրի անցնում են Գերմանիային, դուք քայլքայում եք գերմանական պրոետարիատի շարքերը, ամրապնդելով գերմանական իմպերիալիզմը, դուք որյեկտիվ կերպով արտահայտում եք վոչ թե հերոսական պրոլետարիատի, վոր ընդունակ ե դեռ հեղափոխական կոիվ մղելու, այլ այն մանր-բուրժուազիայի ձգտութները, վորը հոգնել ե պատերազմից, չի ուզում ըմբռնել պարագաների արմատական փոփոխությունը, վորը չի ցանկանում պաշտպանել պրոլետարական պետականացմից—ահա այսպես երբ բնորոշում «Ճախ կոմունիզմը» Լենինի դիրքը, մեր կուսակցության դիրքը: Իրենց կողմից «Ճախ կոմունիստները» առաջադրեցին «հեղափոխական պատերազմի» լոգունդը: «Ճախ կոմունիզմին», գլխավորում եյին ընկ, Բուլարինը, Ռազեկը, Ուսինսկին, և ուրիշները, հարեց նաև Լ. Տրոցկին, վորը նույնպես հաշտություն կնքելու դեմ ձայն տվեց և հետեւյալ լոգունդը առաջադրեց—«վոչ հաշտություն, վոչ պատերազմ»: Նրա և «Ճախ կոմունիստների» դիրքերի մեջ ինարկե եյակտն տարբերություն չկար, վորովհետև նրա դիրքի եյությունը կայանում եր հաշտությունը քակելու քաղաքականության մեջ: «Խսկ ի՞նչ անենք՝ յեթե գերմանական իմպերիալիզմը սկսի զրոհ տալ»—հարցնում եյին Լ. Տրոցկուն: —«Այն ժամանակ — պատասխանում եր նա, —պետք ե պատերազմել»: Իսկ վորովհետև գերմանական իմպերիալիզմի զրոհը բացե ի բաց անխուսափելի յեր (ինչպես վոր կյանքն ապացուցեց՝ վոր ընկ). Լենինը ճիշտ եր գուշակում այդ հարցում), ապա հաշտություն կնքելուց հրաժարվելը նշանակում եր՝ ընդունել հեղափոխական պատերազմի լոգունդը: Լենինի դեմ մղած պայքարի մեջ «Ճախ կոմունիստները» շատ հեռու գնացին: Կուսակ-

ցության ներսում նրանք կազմակերպեցին առանձին ֆրակցիա, վոր հրաժարվում եր հպատակվել կուսակցական բարձր որգանների վորոշումներին և վորը (ֆրակցիան) ուներ իր սեփական որգանը, իր ժողովները, և իրեն հակագլում եր կուսակցությանը: Մյուս կողմից, «Ճախ կոմունիզմը» ցույց տվեց թե ինչպես չպետք ե նայել կուսակցության վրա, թե ինչպես չպետք ե վերաբերվել կուսակցության հետ, թե ինչպես չպետք ե հասկանալ բոյլելիզմի կազմակերպչական սկզբունքները և թե ինչպես չպետք ե «պահպանել» կուսակցության միությունը նույնիսկ ամենածանր պայմաններում: «Ճախ կոմունիզմն» այնուհետև ցույց տվեց թե ինչպես չպետք ե վերաբերվել պրոլետարական դիկտատուրային, ցույց տվեց, վոր չի հասկացել պրոլետարական դիկտատուրայի նշանակությունը, վորպես դասակարգային պայքարի զենքի: Նա ցույց տվեց, վոր չի հասկացել նաև անհրաժեշտությունը շատ և շատ բան զոհ բերելու նրա համար, վորպեսզի պահպանի դասակարգային պայքարի գլխավոր զենքը, ամենաուժեղ զենքը, ինչպիսին ե պրոլետարական դիկտատուրան: «Ճախ կոմունիզմը» այնուհետև ապացուցեց թե ինչպես չպետք ե վերաբերվել բանվորա-գյուղացիական բլոկի հարցին, վորովհետև գերմանական իմպերիալիզմի հաշտության պայմաններն ընդունելը թելազրվում եր վոչ միայն նրանով, վոր այդ միջոցում մենք չունեինք պատերազմ մղելու կազմակերպչական-տեխնիքական և ուրիշ նախադրյաներ և վոր այդ միջոցում պրոլետարիատի ուժերը դեռ այնքան ամուր չեյին,—այլև նրանով, վոր անհրաժեշտ եր բանվորա-գյուղացիական բլոկը պահպանել և ամրացնել, վորովհետև գյուղացիությունը չեր ցանկանում պատերազմել: Յերբ «Ճախ կոմունիստներից» մեկը՝ Ռազեկն ասում եր Լենինին, վոր գյուղացիությունը դեռ ձայն չի տվել և չի արտահայտել իր կամքը,—Լենինը նշանակալից

պատասխանեց Ռադեկին.—«Գյուղացիությունը ձայն տվեց իր վոտքերով, յերբ նա փախուստ եր տալիս ֆրոնտից»:

Ի նկատի առնելով, վոր գյուղացիությունը պատերազմել չեր ցանկանում, վոր հողային ուժորմի իրականացումն ուժեղացնում եր գյուղացիության տուն վերադառնալու ձգտումը, և համարելով վոր պրոլետարական դիկտատուրայի ամրապնդումն անհնարին և առանց ամրապնդելու բանվոր դասակարգի և գյուղացիության սմիջկան (զողումն) — Ենինն ավելի ու ավելի համոզվում եր, վոր անհրաժեշտ ե գերմանական իմպերիալիզմի պայմաններն անհապաղ ընդունել, վոր անհրաժեշտ ե «տարածությունը զիջել՝ ժամանակը շահելու համար»: «Զախ կոմունիստները» չեցին զլանում հեղափոխական ֆրագներ շուայլել. իսկ այժմ միթե պարզ չե ամեն մի կոմունիստի համար, վոր այդ հոսանքը ամենաին սակավ վնասակար չեր, քան վորեւ «աջ հոսանք» մեր կուսակցության մեջ: Միթե այժմ պարզ չե, վոր այդ հոսանքը ծագում եր մեր կուսակցության կազմակերպչական սկզբունքների, պրոլետարական դիկտատուրայի պատմական գերի ու նշանակության, պրոլետարիատի և գյուղացիության միության սիսալ ըմբռնումից: Յենթադրենք մի բոպե, վոր «Ճախ կոմունիստները» հաղթելին մեր կուսակցության մեջ, — ի՞նչ կնշանակեր այդ, ուր կտաներ այդ: Դա կտաներ խորհրդային զորաբանակների ջարդի, խորհրդային իշխանության լիկվիդացիայի և կապիտալիստական ռեստավրացիայի (Ռուսաստանում): Իլիչը հաճախ շեշտում եր, վոր այդ «Ճախ թեքումը» մանր բուրժուական արկածախնդրության, այլ վոչ թե պրոլետարիատի յերկաթե գիտցիպինայի արտահայտությունն ե:

«Միթե կոմունիստը — գրում եր նա — վոր փոքր իշտե հասկանում ե կյանքի պայմաններն և աշխատավորության, շահագործման յենթարկված մասսաների հոգեբանությունը, կարող ե զլորվել մինչև այդ տեսակետը

տիպիկ ինտելիգենտի, մանր-բուրժուազիայի այդ տեսակետը, վորը ապադասակարգայնացված ե, վորը «բարիչի կամ Այախտիչ» տրամադրությունն ունի, վորը «հաշտության հոգեբանությունը» հայտարարում ե իբրև «անգործնեյություն», իսկ կարտոնի սրով թափահարելը — «գործնեյություն»: Կարտոնի սուր են ճոճում, յերբ մեր «Ճախերը» զանց են առնում ամենքին հայտնի և Ուկրայնայի պատերազմով միանգամ ևս ապացուցված փաստը, վոր յերեք տարվա սպանդանոցով տանջված ազգերն առանց շունչ քաշելու պատերազմել չեն կարող, և վոր պատերազմը, յեթե նա հնար չունի ազգային մասշտաբով կազմակերպելու, միշտ ել հարվածում ե մանր-սեփականատիրության հոգեբանությունը, այլ վոչ թե պրոլետարական յերկաթե գիտցիպինան:

Յեվ հենց «Ճախ կոմունիզմի» դեմ եր, վոր Իլիչն ասում եր, թե «մեզ հարկավոր են վոչ թե հիստերիկային պոռթկումներ, այլ պրոլետարիատի յերկաթե բատալիոնների անհողողութեան և վստահ առաջխաղաց:

Այդպես ուրեմն, վոչ մի հիմք չկա այսպես կոչված «Ճախ» թեքումներն ավելի սակավ վտանգավոր, սակավ վնասակար, պրոլետարիատին սակավ թշնամի համարելու, քան աջ թեքումները: Այդ նախապաշարմունքները պետք ե ցըել: Պետք ե լավ թմբունել «աջերի» և «Ճախերի» ստորաբաժանման ամբողջ պայմանականությունը, և կուսակցական գծից ամեն մի շեղումն գնահատել վոչ թե ֆրակցիոնական պլատֆորմներում կուտակված հեղափոխական ֆրագների քանակով, վոչ թե այդ ֆրագների հնչեղությամբ, այլ այդ պլատֆորմի քաղաքական իրական բովանդակությամբ, ոպպոզիցիայի առաջադրած պահանջների ոբյեկտիվ գերով:

2—2132

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ՊՈՏՈԽՈՆԵՐԻ
Ակադեմիա Նայ
ՀՀ



17

«ԴԵՄՈԿՐԱՏԻԿ ՑԵՆՏՐԱԼԻԶՄԻ ԽՈՒՄԲԸ»

«Զախ կոմունիստական» հոսանքին վերջ տալուց մետարի հետո, կուսակցության ներսում յերևան յեկալ նոր ռազմողիցիա, վոր ներկայացնում եր այսպես կոչված «գեմոկրատիկ ցենտրալիզմի խումբը», վորին գլուխ ելին կանդնած Սապրոնսկ, Ռոխնակիյ, Մաքսիմովսկիյ, Վ. Սմիրնով և այլն: «Դեմոկրատիկ ցենտրալիզմի խումբը» կանգնած եր այն տեսակետի վրա, վոր մեր կուսակցությունը բյուրոկրատիկ ձեռվ ե կազմված, վոր պետք ե թուլացնել ցենտրալիզմը և տեղական կազմակերպությունների համար ապահովել ավելի ինիցիատիվով գործելու պայմաններ, և վոր հարկավոր ե վճռականապես կանգնել կուսակցությունն ավելի դեմոկրատիկ կերպով կազմակերպելու ուղիի վրա: Վոչ մի կասկած չկա նրանում, վոր ռազմական կոմունիզմի ամբողջ պարագաները նպաստում ելին մեր կուսակցական ապարատի բյուրոկրատիզացիային և վոր այդ բյուրոկրատիզմի դեմ պայքարելը և այդ պայքարի համար կոչ անելը վոչինչ հակակուսակցական բան չեր ներկայացնում: Սակայն այն ոպարողիցիան առանձին պլատֆորմ առաջադրեց ընդդեմ կուսակցական հայացքների, առաջադրեց հայացքների առանձին մի սիստեմ ներկուսակցական դեմոկրատիայի պերսպեկտիվների վերաբերմամբ. այդ սիստեմով նա ըստ եյության յելնում եր մեր կուսակցության մեջ տիրող ցենտրալիզմի սիստեմի դեմ, ցենտրալիզմի սկզբունքի դեմ: Քանի վոր այդ այդպես եր, հետեւաբար «գեմոկրատիկ ցենտրալիզմի խումբը» գոյություն ունեցող և ուղղելու կարութերաւթյունների քննադատությունից անցնում եր կուսակցական բոյլեկիլյան կազմակերպության սկզբունքների քննադատության: Հաշվի առնելով այդ, կուսակցությունը,

ի դեմս լենինի, «գեմոկրատիկ ցենտրալիզմի խումբը» լուրջ քննադատության յենթարկեց:

Ներկուսակցական հարցերի վերաբերմամբ (վերև հիշած դիրքին համապատասխան) «գեմոկրատիկ ցենտրալիզմի խումբը» յելնում եր միավարության սկզբունքի դեմ՝ մեր խորհրդային հիմնարկությունների մեջ, և առաջադրում եր կոլեգիալության սկզբունքը: Լենինը և մեր կուսակցության մեծամասնությունը սկզբունքով չելին ժխտում կոլեգիալությունը, բայց յենթադրում ելին, վոր այն պայմաններում, վորոնց մեջ խորհրդային պետությունը մաքառում եր՝ քաղաքացիական կովի տարիներում իր ամրապնդման և իր հիմքի ամրացման համար, միավարությունն ավելի ուղիղ և ավելի նպատակահարմար կառավարելու մեթոդ եր: Միավարությունը—պնդում եր լենինը, չի ժխտում գեմոկրատիան, վորովհետև մեզ մոտ գոյություն ունի ընտրողականություն՝ դեկավարող կազմակերպությունների, վորոնք այս կամ այն անձի նշանակում են պատասխանատու-ղեկավարիչ աշխատանքի վրա: Հարցը վերաբերում է միմիայն ձկուն, մոմենտի տարբեր պահանջներին արագ պատասխան տվող կազմակերպության ստեղծման: «Բյուրոկրատիկ ցենտրալիզմի խմբի» պլատֆորմի մեջ արտաքին դեմոկրատիզմը քողարկում եր ըստ եյության բյուրոկրատիկ-կազմոնին, բարդ, կառավարելու վոչ ձկուն սփառեմ: Առարկելով առհասարակ միավարության դեմ, «գեմոկրատիկ ցենտրալիզմները» խիստ կտրուկ կերպով առարկում ելին այն բանի դեմ, վոր այդ միավարությունը տարածվեր սպեցների, աելնիկների վրա, վորոնք իրենց իդեոլոգիայով չելին պատկանում պրոլետարիատի ավանդաբարդին: Յեվ հենց այդպիսով նրանք դեմ ելին վորպեսզի խորհրդային պետությունը ոգտագործեր այն կուլտուրական և կազմակերպիչ ուժերը, վորոնք մնացել ելին նրան կապիտալիստական հասարակությունից:

Հնկ. Լենինն այդ տեսդենցի գեմ ել կտրուկ առարկեց: Նա շեշտեց, վոր ուղիղ կոմունիստական քաղաքականությունը կայանում ե նրանում, վոր սոցիալիզմ կառուցելու համար հին հասարակության կուլտուրական ուժերը, և ամենից առաջ, տեխնիկական սպեցիալիստների ջոկատը ոգտագործվի: Այդպես, IX համագումարին, կենսակոմ. հաշվետվության մեջ նա ասում եր,—«Ամեն մի քայլափոխում կոլեգիալության վերաբերյալ դատողությունները թափանցված են ամենատգետ վոգով, «հակասպեցական» վոգով: Այդ վոգով հաղթել չի կարելի: Հաղթելու համար հարկավոր ե հասկանալ հին բուրժուական աշխարհի ամբողջ ամենախորագույն պատմությունը և կոմունիզմը կառուցելու համար հարկավոր ե փոխառնել թե տեխնիկան, թե գիտությունը և գործադրել ավելի լայն խավերի համար, իսկ փոխառնել կարելի յե միմիայն բուրժուագիայից: Այդ հիմնական հարցը պետք ե ամենից առաջ քաշել, և անտեսական շինարարության հիմնական խնդիրներից մեկը դարձնել: Մենք պետք ե կառավարենք նրանց ողնությամբ, վորոնք դուրս են յեկած այն դասակարգից, վորը մենք խորտակեցինք, նրանցով, վորոնք սնված են իրենց դասակարգի նախապաշարմունքներով և վորոնց մենք պետք ե վերակրթենք: Միաժամանակ մենք մեր կառավարողներին պետք ե մեր դասակարգի շարքերից հավաքենք, պետական ամբողջ ապարատը մենք պետք ե գործադրենք նրա համար, վորպեսզի թե կրթական հիմնարկությունները — թե արտադպրոցական կրթությունը և թե գործնական պատրաստությունը — այդ ամենը կոմունիստների ղեկավարությամբ ծառայեն պրոլետարներին, բանվորներին, աշխատավոր գյուղացիներին: Նշանակվածներին (հաջաշենու) վերաբերյալ այդ բոլոր աղմուկը, այդ բոլոր հին և վնասակար զիրիլը, վոր աեղ են գըտնում զանազան բանաձևերի, խոսակցությունների մեջ —

պետք ե ավելով մաքրել, այլ կերպ մենք հաղթել չենք կարող»:

Վերջապես «գեմոկրատիկ ցենտրալիզմի խումբը» ցանկացավ վորպեսզի կուսակցական կազմակերպությունը մի փոքր թուլացնի իր ղեկավարիչ ազգեցությունը խորհրդային հիմնարկությունների վրա: Սապրոնովը և մյուսները յենթադրում եին, վոր կուսակցությունը չպետք ե խառնվի տնտեսական որդանների ամենորյա կոնկրետ աշխատանքի մեջ, այլ պետք ե բավականանա ընդհանուր քաղաքական ուղղություն տալով: Ինքնըստինքյան հասկանալի յե, վոր այդ տեսդենցը նմանապես դատապարտվեց կուսացկության կողմից, վորովհետև յեթե «գեմոկրատիկ ցենտրալիստները» վորոշ հիմք ունեին հաստատելու այն մասին, վոր խորհրդային հիմնարկությունների մեջ բյուրոկրատիկ խեղաթյուրումն տեղի ունի, և վոր այս կամ այն աեղ բուրժուական սպեցները չափազանց շատ իրավունքներ են ձեռք առնում և խորհրդային հիմնարկությունների ղեկավարներին իրենց խաղալիք են դարձնում, — ապա հենց այդ փաստերիցն ե բղխում, վոր կուսակցությունը պետք ե ավելի սերտ, ավելի կոնկրետ, ավելի սիստեմատիկ կերպով ղեկավարի խորհրդային հիմնակցությունները:

Այդ խումբը իր հեղափոխական ֆրագեռողիայով նույնպես «ձախ» խումբ եր, բայց ամենքին հասկանալի յե, վոր կուսակցության կողմից խորհրդային հիմնարկությունների ղեկավարումը թուլացնելու տեսդենցը իրոք նշանակում եր թուլացնել բոյլշեկիյան դիրքերը պրոլետարական պետության մեջ, զորեղացնել այդ պետության ապարատի մեջ ծծված՝ մանր-բուրժուական տարրերի գերը և նպաստել խորհրդային պետության այլասեռովելուն:

Յեթե կուսակցությանը բավական հեշտությամբ հաջողվեց հաղթել «գեմոկրատիկ ցենտրալիզմի» խմբին և

բանն այնպես տանել, վոր արդեն X համագումարին այդ խումբը իրեն լուծված հայտարարեց, ապա նոր տնտեսական քաղաքականության շեմքում, այդ բարդ ստրատեգիական շեղապտույտի ժամանակ, կուսակցության վորոշավերում նորից նկատելի յեղան տատանումներ:

ՏՐՈՑԿԻՉՄԸ ՅԵՎ «ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՈՊՐՈԶԻՑԻԱՆ» ՆԵՐԻ ՇԵՄՔՈՒՄ

Լեհաստանի հետ հաշտություն կնքելուց հետո պարզ յեղավ, վոր մեր առաջ նշմարվում ե «խաղաղ» տնտեսական շինարարության մի շրջան, և վոր կուսակցության առաջ ամենասուր և ամենալուրջ կերպով կանգնում են տնտեսական շինարարության հարցեր, և վոր այժմ առաջին պլանում կանգնած հիմնական պրոբլեմները տնտեսական քաղաքականության պրոբլեմներն են: Մյուս կողմից պարզ եր լինում, վոր այդ տնտեսական հարցերը վճռելիս ամենազիակարգ հարցն եր բանվորա-գյուղացիական սմիջկայի ուղիղ ձևեր գտնելը, վոր համապատասխան լիներ պրոբլեմարական դիկտատուրայի գյուղության այդ շրջանին: Ընկ. Լենինը վերին աստիճանի զգուշությամբ եր մոտենում այդ վիթխարի հարցերին: Նա ուսումնակիրում եր բանվորների և գյուղացիների տրամադրությունն ու պարագաները, իր յեզրափակումների համար ապացույցներ նա գտնում եր թե քաղաքական մեծ հողվածներում, և թե բանվորների ու գյուղացիների փոքր նամակներում և թե այն հարցերում և կասկածներում, վոր արտահայտում եյին բանվորա-գյուղացիական ժողովների մասնակիցները: Նա ուսումնասիրելով նոր պարագաներն, նշում եր այն ստրատեգիական շեղապտույտը, վոր տանելու յեր դեպի նոր տնտեսական քաղաքականությունը:

Յեվ ահա ուազմական շրջանը վերջանալուց հետո, «խաղաղ» տնտեսական շինարարության շեմքին, կուսակցության ներսում սուր կերպով դրվեց պրոֆմիություններին վերաբերյալ հարցը: Այդ հարցի վերաբարմամբ հատուկ պլատֆորմով դուրս յեկալ է, Տրոցկին: Լ. Տրոցկին իր պլատֆորմը կազմելու համար յելնում եր նրանից, վոր տնտեսապարության ուազմա - կոմունիստական մեթոդները չեն վերացվում պատմական զարգացման նոր շրջանով, և վոր անհրաժեշտ ե ուազմական կոմունիզմի եպոխայում կուսակցության ցուցադրած ուղիով դեռ ևս մի քանի քայլ առաջ գնալ: Նա հետևյալ գործնական և քաղաքական հետևությունն եր անում.—անհրաժեշտ ե վճռական և ամուր կուրս վերցնել և այնպես անել, վոր մոտակա ժամանակում պրոֆմիությունները դառնան արդյունաբերության դեկավարները, անհրաժեշտ ե վոր պրոֆմիությունների ներկայացուցիչները մեխանիկորեն մտնեն դեկավարիչ տնտեսական հիմնարկությունների մեջ և այդպիսով անմիջապես տնտեսական դեկավարման դեկի մոտ կանգնեն, ուստի և անհրաժեշտ ե «թափ տալ» պրոֆեսիոնալ որգանները, համապատասխան ուշադրություն դարձնել դեկավարիչ պրոֆեսիոնալ որգանների վրա: Այսպես եր նրա պլանը:

Լենինը ստիպված եր վճռականապես այդ պլատֆորմի դեմ յելնել, և քննադատում եր այդ պլատֆորմը ամենից առաջ բանվորա-գյուղացիական բլոկի տեսակետից: Լենինի մտքերի շարքը հետևյալն եր,—մենք անցնում ենք տնտեսական շինարարության նոր շրջանին. այդ նոր շրջանը պահանջում ե վոր պրոբլեմարիատը նոր հարաբերություններ հաստատի գյուղացիության հետ. գյուղացիությունը հանգուրժում եր տնտեսավարելու ուազմա - կոմունիստական մեթոդները՝ մինչև վոր դա նրա աչքում արդարացվեց գեներալական-կալվածատիրական հականեղափոխական կլի-

կայից պաշտպանվելու անհրաժեշտությամբ։ Իսկ յերբ անմիջական ռազմական պարագաները վերջացան, այն ժամանակ գյուղացիները սկսեցին ավելի և ավելի համառ կերպով պահանջել այնպիսի քաղաքականության անցնել, վորը հնարավորություն կտար գյուղացիական տնտեսության բարգավաճելուն, վորը հնարավորություն կտար ամրացնելու իր նյութական արտադրությունը, վորը կապահովեր իրենց մասնավոր տնտեսավարումն։ Լենինը վոչ մի բոպե աչքաթող չեր անում բանվոր դասակարգի և գյուղացիության մեջ նոր հարաբերություն հաստատելու այդ կենարոնական պրոբեմը։ Նա կամաց կամաց մոտենում եր հարցի այն ձևակերպման, վոր տվել եր նա իր «Պարենհարկի մասին» բրոցյուրի մեջ, և վորովհետև նրա առաջ արդեն գծագրվում ելին նոր տնտեսական քաղաքականության պերսպեկտիվները, ուստի և նա անհրաժեշտ եր համարում պայքարելու հնացած, քաղաքականապես սխալ, բանվորա-գյուղացիական սմիջկայի իրականացման նոր պայմանները հաշվի չառնող, պրոֆմիությունների վերաբերյալ և։ Տրոցկու տված հարցի ձևակերպման դեմ։

Յեթե պերսպեկտիվում կա նոր տնտեսական քաղաքականությունը, յեթե պերսպեկտիվում կա շուկայի հարաբերությունների վերականգնումն, յեթե պերսպեկտիվում կա առևտրական հաշիվ և այլն—արդյունաբերության վերաբերմամբ վոչ մի կերպ չի կարելի նպատակահարթար համարել պրոֆմիությունների միջոցով արտադրությունը դեկավարելու սիստեմը։ Ըստհակառակն, տնտեսավարելու նոր գալիք ձևերը պահանջելու յեն հատուկ ձկուն սիստեմ, վորը հնարավորություն և տալու շուկայի պայմաններում հաջող գործելու, իսկ այդ պայմանները ուժեղացնելու յեն տնտեսական դեկավարների մաների ընդունակությունը։ Ուստի և լենին ամենակտրուկ կերպով դուրս յեկավ և։ Տրոցկու դիրքի դեմ և մասնացույց արեց, վոր պրոֆ-

միությունների կենտրոնական խնդիրն ե՝ բանվոր մասսաների կրթությունը, և իրու գլխավոր լողունգ առաջադրեց՝ «Պրոֆմիությունները—կոմունիզմի դպրոցն ե»։ «Անալիզի յենթարկելով ներկա քաղաքական մոմենտը,—հայտարարեց Լենինը,—մենք կարող ենք ասել, վոր մենք անցողական շրջանում ապրում ենք անցողական շրջան։ Պրոլետարիատի ամբողջ դիկտատուրան անցողական շրջան ե, իսկ այժմ մենք ունենք, այսպես ասած, անցողական շրջանների մի ամբողջ շարան։ Զորաբանակի դեմոքրիվացիան, պատերազմի վերջանալը, ավելի հարատե քան առաջ խաղաղ շունչ քաշելու հնարավորություն, ավելի հաստատուն փոխանցումն ու ազմական ֆրոնտից աշխատանքի ֆրոնտին։ Հենց մենակ սրանից արդեն փոփոխվում ե պրոլետարիատի դասակարգի հարաբերությունը գյուղացիության դասակարգի վերաբերմամբ։ Թե ինչպես ե փոփոխվում, —այդ պետք ե ուշադրությամբ դիտել, իսկ ձեր թեզիսներից այդ չի դուրս գալիս։ Քանի դեռ լավ չենք դիտել, պետք ե կարողանանք համբերել։ Տիաժամանակ նա շեշտում եր այն հանգամանքը, վոր Տրոցկու պլատֆորմը բյուրո-կրատիկ ե, վորի փայլուն արտահայտությունն ե՝ պրոֆմիություններին «թափ տալու» պլանը։

Այդպիսով այդ շրջանում Տրոցկին դարձյալ յերևան բերեց իր նախկին հայացքները, վորոնք նրան անջատում ելին լենինից—իր առաջվա մոտեցումը քաղաքականության հիմնական հարցերին՝ առանց հաշվի առնելու այն պիսի մի պրոբլեմ, ինչպիսին ե պրոլետարիատի և գյուղացիության փոխադարձ հարաբերությունների պրոբլեմը, իր առաջվա անկարողությունը՝ ուղիղ ձևակերպելու և վճռելու պրոլետարիատի հեգեմոնիան աշխատավորների լայն մասսաների վերաբերմամբ ապահովելու հարցը։

Տրոցկիստներից շատ ավելի հեռու գնացին «բանվորական ոպպողիցիա» կոչված խմբում միավորված բոլշևիկները, վորոնց զլուխ եյին կանգնած Շլյապնիկով, Մելքոնյան, կոլոնտայ և այլն: «Բանվորական ոպպողիցիան» ավելի հեռու յեր գնում: Նա ուղղակի անարխութիւնիկալիստական հողի վրա կանգնեց և առաջարկեց արտադրության անմիջական և լիովին դեկավարությունը հանձնել անմիջապես պրոֆմիություններին: Դրանով նա, ըստ բանի եյության, առաջարկում եր պրոլետարական պետության լիկվիդացիա և սոցիալիզմի կառուցման փունկցիաները (վոր կրում ե պրոլետարական դիկտատուրան) հանձնել պրոֆմիություններին: Այդպիսով նրանքիջնում եյին Մարքսի և Լենինի դիրքերից պրոլետարական դիկտատուրայի վերաբերմբ և գլորվում եյին դեպի անարխութիւնավայրական շաբանական պլատֆորմը: Մյուս կողմից, թեև այդ խումբը իրեն կոչում եր բանվորական և իրոք իր շարքերում ուներ բանվոր բոյցեկիներ, նա այնպիսի մտքեր արտահայտեց, վոր վայել եր միայն մանր-բուրժուազիայի ներկայացուցիչներին, վորովհետև այդ խմբի առաջնորդների պահանջի համաձայն, տնտեսական հիմնական հարցերը պետք ե վճռվեյին «արտադրողների համագումարներում», իսկ՝ ինչպես հայտնի յե՝ «արտադրողներ» են հանդիսանում նաև մանր-բուրժուան: Ընկ. Լենինը կատաղի ոմբակոծման յենթարկեց պրոֆմիությունների մասին տեղի ունեցած դիսկուսիայի ժամանակ մանավանդ այդ «համագումարների» մասին առաջարկը:

Նա յեր X համագումարի ընդունած բանաձեռի (վոր ուղղած եր «բանվորական ոպպողիցիայի» անարխութիւնավայրական թեքման դեմ) հեղինակը: Նույն X համագումարին կուսակցությունն ընդունեց նոր տնտեսական քաղաքանության կուրսը և այդպիսով ժխտեց հարցի ձևակերպումը՝ տնտեսավարման ուղմակոմունիստական

մեթոդների շարունակության և խորացման մասին: Կյանքը ցույց տվեց թե վոր առաջինան բյուրոկրատիկ եյին և տնտեսական դեկավարման ուղիղ ձևերից հեռու եյին այն ձևերը, վոր ցուցադրված եյին լ. Տրոցկու ծրագրներում: Կյանքը վերացրեց հարցի այն ձևակերպումն, վոր տվել եր Տրոցկին, և դրա հետևանքով տրոցկիստները ստիպված եյին նույնպես յետ վերցնել իրենց պլատֆորմը: «Բանվորական ոպպողիցիան» չհանգատացավ. Նա չընդունեց լենինի թեզիները պրոֆմիությունների վերաբերյալ, նա չընդունեց տնտեսական քաղաքականության այն ընդհանուր հիմունքները—տնտեսական շինարարության շրջանում—վոր ձևակերպել եր լենինը նոր տնտեսական քաղաքականության պլատֆորմում: «Բանվորական ոպպողիցիան» կտրուկ կերպով առարկեց նոր տնտեսական քաղաքականության սկզբունքների դեմ: Նա դատապարտեց մասնավոր առևտորին անցնելը: Նա առանձնապես խիստ հարձակվում եր մասնավոր կապիտալի թույլտվության դեմ: Նա խիստ դատապարտում եր սպեցներին վարչական որդաններում ընդունելը. Նա բանվորա-գյուղացիական բլոկի դեմ դուրս յեկավ. Նա իբր թե պաշտպանում եր «զուտ բանվորական» քաղաքականությունը, վորը մերժում ե զիջումներ անել զյուղացիության. Նա կանգնած մնաց ուղմական կոմունիզմի քաղաքականության սկզբունքների հողի վրա, չհասկանալով դասակարգային հարաբերությունների այն վիթխարի փոփոխությունը, վոր նկատելի յեղավ պատերազմը վերջանալուց հետո: Բոլորովին պարզ ե, վոր այդ նոր «ձախ» թեքումը վճռականապես իր կապը կտրում եր բոյցեկիզմի սկզբունքներից և պրոլետարական դիկտատուրայի ամրապնդման զորեղ արգելք եր հանդիսանում, ահազին վասա պատճառելով նրան: Յենթարբենք մի ըոպե, վոր կուսակցությունը Շլյապնիկովի, Մելքոնյանի և ուրիշների զիրքին կանգներ, վոր կու-

սակցությունը չանցներ նոր տնտեսական քաղաքականության, այլ շարունակեր ուղղմական կոմունիզմի քաղաքականությունը։ Ուր կտաներ այդ։ Այդ կտաներ այն բանի, վոր կրօնշտադի ազստամբությունը վոչ թե սահմանափակ տեղական շարժում կիներ, այլ գյուղական մասսաների համառուսական հականեղափոխական պատերազմ՝ պրոլետարիատի դեմ։ Այդ կնշանակեր խորհրդային դիկտատուրայի խորտակումն, հետագա տնտեսական քառու և վերջի վերջո կապիտալիստական ուստավրացիա։

Այս թե ինչումն ե կայանում այդ «ձախ» թեքման քաղաքական բովանդակությունը իր գոյության ամենալավ շրջանում։ Զախ ֆրազան այստեղ քողարկում եր այդ դիրքի հակապրոլետարական ամենավասար (պրոլետարական դիկտատուրայի տեսակետից) բովանդակությունը։ Զախ ֆրազան այստեղ քողարկում եր այնպիսի ձգտումներ, վորոնց իրագործումն և զարգացումը կորստի յեր մատնելու բանվորական պետությունը և տանելու յեր դեպի կապիտալիստական ուստավրացիա։

«Բանվորական ոպպոզիցիան» և տրոցկիստական ոպպոզիցիան նոր տնտեսական քաղաքականության շեմքում վերջին թեքումներն եյին, վորոնց դեմ պայքար մղվեց Լենինի դեկավարսւթյամբ։ Խ համագումարին, վորը դատապարտեց այդ թեքումները, լենինը, ի նկատի առնելով այն ահազին վնասը, վոր այդ թեքումները հասցնում եյին կոմունիստական շարժման, առաջարկեց և ընդունել տվեց ֆրակցիաների և խմբավորումների արգելման վերաբերյալ հատուկ բանաձև, վոր պատմական և գործնական ահազին նշանակություն ունի։

«Այդ դիսկուսիան, — շեշտում եր ընկ. լենինը կուսակցության Խ համագումարին, պետք ե նպաստեր մեզ հասկանալ, վոր մեր կուսակցությունը, վոր արդեն կես միլիոնի յե հասնում և նույն իսկ դեռ կես միլիոնից ել

անցնում ե, դարձել ե, նախ՝ մասսայական կուսակցություն, յերկրորդ՝ պետական կուսակցություն, և վոր մասսայական կուսակցություն լինելով մասսամբ արտահայտում ե և այն՝ ինչ վոր իր շարքերից դուրսն ե։ Այս հանգամանքը շատ և շատ կարեոր ե հասկանալ։ Մի փոքրիկ սինդիկալիստական կամ կիսաանարխիստական թեքումը սարսափելի չեր լինի, — կուսակցությունը արագ և վճռականապես կզիտակցեր և կձեռնարկեր ուղղելու այդ։ Բայց յեթե նա կապ ունի այն հանգամանքի հետ, վոր յերկրում գյուղացիությունը վիթխարի գերակշռություն ունի, այդ դեպքում ժամանակ չկա վիճելու թերետիկ թեքումների մասին և մենք պետք ե դրանից համապատասխան դաս առնենք և կենտրոնական կոմիտեյի քաղաքական հաշվետվությանը... ուժ տանք, ամրացնենք և կուսակցության համար դա պարտականություն և որենք դարձնենք»։

Այս բոլորն ի նկատի առնելով, Խ համագումարն ընդունեց բանաձևի V՝ միաձուլությանը վերաբերող կետը, վորի մեջ առաջարկվում ե ֆրակցիոներներին կուսակցությունից արտաքսել։

1923 թ. ՏՐՈՑԿԻՍՏԱԿԱՆ ՈՊՊՈՉԻՑԻԱՆ

Այդ բանաձևն անհրաժեշտ ե դիտել վորպես Լենինի ամենագլխավոր ավանդներից մեկը, վորպես մեր ներկուսակցական քաղաքականության ամենագլխավոր սկզբունքներից մեկի ձևակերպումն։

Ընդհանուր կուսակցական գծից նոր թեքումներ նկատելի յեղան և ձևակերպվեցին կուսակցության մեջ արդեն այն շրջանում, յերբ ընկ. լենինը իր հիվանդության պատճառով անկարող եր դեկավարել կուսակցությունը։ Մենք ի նկատի ունենք, ամենից առաջ, 1923 թվի այսպես կոչ-

ված ոպպողիցիան, մեր կուսակցության մեջ տրոցկիզմի այդ հերթական ոեցիդիվը։ Լ. Տրոցկին այդ միջոցին հանդես յեկալ նոր տնտեսական քաղաքականության և ներկուսակցական քաղաքականության վերաբերյալ նոր պլատֆորմով։ Նրա դիրքի տնտեսական եյությունը կայանում եր նրանում, վոր նա ձգտում եր բանվորա-դյուլացիական բլոկը խախտելու։ Նա առաջարկեց այսպիսի քաղաքականություն վարել, վորը կկովեցներ բանվոր դասակարգն և գյուղացիությունը և կդժվարացներ սոցիալիզմի կառուցումը մեր յերկրում։

Այդ ձգտումը շատ ավելի պայծառ արտահայտեց իր գրվածքում ոպպողիցիայի մի այլ առաջնորդ ընկ. Պրեռբրաժենսկին, վորը հանդիսանում է իրեւ հեղինակ այսպես կոչված «սոցիալիստական նախնական կուտակման» որենքի։ Հստ այդ որենքի, պրոլետարիատը պետք է նայի գյուղացիության լայն մասսաների վրա վորպես «գաղութի», վորպես «եքսալուստացիայի» որյեկտի վրա։ Հստ այդ թեորիայի պրոլետարիատը պետք է գյուղացիությունից վերցնի վոչ պակաս, քան վերցնում եր նրանից կապիտալիստական պետությունը. այդ թեորիայից դուրս է գալիս, վոր պրոլետարիատը վոչ թե պետք է «փոփոխի» գյուղացիությունը, այլ պետք է «լափի» նրան. ըստ այդ թեորիայի մասնավոր կապիտալն ու միջակ և չքավոր գյուղացիության լայն խավերը նույն թարափի վրա յեն դասվում և նրանց բոլորի վերաբերմամբ («մասնավոր արտադրություն») սկզբունքով մի ընդհանուր քաղաքականության գիծ եր ցուցադրվում։ Մասնավորապես այդ գիծն իր արտահայտությունը գտավ արդյունաբերության ապրանքների գները բարձրացնելու լողունզի մեջ։

Մյուս կողմից, ոպպողիցիան պահանջում եր պլանային սկզբունքի անողոք իրագործումն, թեպետ և այդ պլանայությունը նա հասկանում եր վոչ ըստ լենինի, վո-

րովհետեւ լենինը պլանայնության հաջողությունը նկատում եր նրանում, վոր շուկայի տարերայնությունը նվաճվի՝ հաշվի առնելով այդ շուկայի փոփոխությունները և ամենից առաջ գյուղական շուկայի փոփոխությունները. իսկ տրոցկիստներն իրենց պլուկաներում պլանայնությունը հասկանում եյին բյուրոկրատիկ կերպով, առանց լուրջ ուսումնամիբելու գյուղական շուկայի պրոբլեմը և արդյունաբերական շինարարությունը գյուղացիական տընտեսության հետ շաղկապելու պրոբլեմը։ Քանի վոր նրանք չեյին տեսնում այդ վերջին պրոբլեմը, ուստի և նրանք կարծում եյին վոր խորհրդային պետությունը մինչև այժմ շատ վատ ե պլանավորել, և վոր կարելի յե արմատապես փոփոխել պլանավորության մեթոդները, և վոր առանց դժվարության կարելի յե պլանավորել ըստ որացույցի և այն, և այն։ Այդպիսով տրոցկիստական այդ պլատֆորմի որգանական թերությունն եր՝ գյուղացիությանը նվազ չափով հաշվի առնելը, բանվորա-գյուղացիական սմիչկայի պրոբլեմի—վորպես մեր քաղաքականության հիմնական պրոբլեմի—անըմբունումն, բանվորա-գյուղացիական բլոկի խզման ձգտումն և այդ հիմնական հարցում լենինիզմից հեռացումն։ Նույն այդ ուղիյով եյին գնում և ոպպողիցիայի առաջարկները՝ լիկվիդացիայի յենթարկելու համար այն մեծ դերը, վոր այդ միջոցին մեր տնտեսական քաղաքականության մեջ վիճակի եր զեկավարող գինանատական հիմնարկություններին։ Կուսակցությունն ամբողջապես յենթարկում եր, վոր կայուն վայցուտայի պրոբլեմը կենտրոնական պրոբլեմ է, վորովհետեւ առանց կայուն վայցուտայի անկարելի յե նոր տնտեսական քաղաքականության պայմաններում արդյունաբերությունը կարգավորել, անկարելի յե պլանայնությունը իրականացնել, իսկ մյուս կողմից անկարելի յե ապահովել պրոլետարական քաղաքի և գյուղացիական գյուղի միջև նորմալ հարաբե-

բություններ, անկարեցի յե տնտեսական տեսակետից ամ-
բացնել արդյունաբերության և գյուղատնտեսության սմիջ-
կան։ Այն ինչ տրոցկիստները, չհասկանալով այդ ժամա-
նակա կենտրոնական խնդիրները, դուրս յեկան դրամա-
կան ռեֆորմի դեմ, «Քինանսական կոմիսարիատի դիկտա-
տուրայի» դեմ և արդյունաբերության հարցը այդ ժամա-
նակի կենտրոնական պլոբեմից անջատ ելին դնում, վո-
րով և ակներք ելին դարձնում, վոր իրենք չեն ըմբռնում
բանվորա-գյուղացիական հարաբերությունների վերաբեր-
յալ ուղղի քաղաքականությունը։

Զախ Փրազան այստեղ ել հնչեց։ Ոպպոզիցիան մե-
ղադրում եր կուսակցական դեկավարությունը նրանում,
վոր նա չի ապահովում բավականաչափ արագ սոցիալիս-
տական կուտակումն, վոր նա բավական յեռանդով չի տա-
նում սոցիալիստական պլանավորության քաղաքականու-
թյունը, վոր նա բավականաչափ չի ամրացնում պրոլետա-
րական պետության տնտեսական հիմքը, — իսկ ոպպոզի-
ցիայի այդ պլատֆորմը իրոք ուղղված եր պրոլետարիատի
դեմ, նրա շահերի դեմ, և խախտում եր այն նվաճումները,
վոր պրոլետարական դիկտատուրան ձեռք եր բերել նախըն-
թաց շրջանում։

Զախ Փրազան այստեղ ել իր տակ թագցնում եր հակա-
պրոլետարական բովանդակություն։ Յեթե կուսակցու-
թյունը կանգներ 1923 թվի ոպպոզիցիայի ցույց տված
ուղիի վրա, յեթե կուսակցությունը Լ. Տրոցկու և Պրե-
ոբրաժենսկու տնտեսական քաղաքակությունը տաներ, յեթե
նա այդպիսով խախտեր բանվորա-գյուղացիական բլոկը,
յեթե դրամական ռեֆորմը քանդվեր և տնտեսական շինա-
րարությունը կատարվեր անկայուն վայլուտայի պայման-
ներում, — ապա քիչ հետո մենք կանգնած կլինելինք տըն-
տեսական կրիզիսի առաջ, ամենախոշոր ցուցումների առաջ,
վոր կհարվածեր ամենից առաջ մեր սոցիալիստական ար-

դյունաբերությանը և բանվոր դասակարգին։ Ապա մենք
կանցնելինք գյուղացիության բացարձակ քաղաքական
ապստամբություններին պրոլետարական դիկտատուրայի
դեմ։ Ահա թե ուր եր տանում ոպպոզիցիայի գիծը։ Ահա
այդպես եր նրա որյեկտիվ դերը։ Այդպես եր այդ պլատ-
ֆորմի հակապրոլետարական բովանդակությունը, իսկ Փրա-
զան — ձախ եր, հեղափոխական խոսքերը — բազմաթիվ, և
ոպպոզիցիան իրան համարում եր ավելի հեղափոխական
քան ամբողջ կուսակցությունը։

Բայց 1923 թվի ոպպոզիցիան չսահմանափակվեց տըն-
տեսական պլատֆորմով։ Նա վերանորոգում եր տրոցկիզմը
նաև կազմակերպչական հարցերի վերաբերմամբ, վորով-
հետև պայքարի պրոցեսում նա այնուեղ հասավ, վոր պա-
հանջում եր բոյլշկիկյան կուսակցության ներսում Փրակ-
ցիաների և խմբավորումների լեգալ գոյություն։ Լենինի
վերջին քաղաքական ամենախոշոր յելույթը ներկուսակցա-
կան հարցերի վերաբերյալ, գա նրա յելույթն եր (X հա-
մագումարին) — Փրակցիաներ և խմբավորումներ արգելելու
բանաձեն ընդունելու մասին։ Իսկ առաջին յելույթը, վոր
թույլ տվեց իրեն Տրոցկին ներկուսակցական կազմակեր-
պության հարցի մասին լենինի մահից հետո, — Փրակցիա-
ներ և խմբավորումներ լեգալ դարձնելու մասին եր։ Յեկ
այնուամենայնիվ տրոցկիստները համարում ելին վոր հենց
իրենք են ներկայացնում մեր կուսակցության մեջ լենին-
յան հոսանքը, և վոր հենց իրենք են կանգնած բոյլշկիկ-
յան վիրքերի վրա, միայն իրենք են շարունակում լենին-
յան քաղաքական գիծը։

1923 թ. գիսկուսիան ամենառժգին կերպով ցնցեց
կուսակցական որգանիզմը, Պայքարն այնպիսի սուր ձևեր
ընդունեց, վոր շատ վաղուց չեր յեղեւ։ Ոպպոզիցիան
ամեն կերպ ջանում եր քաղաքայել կուսակցական դեկա-
վարությունը։ Նա ձգտում եր կուսակցության լայն խա-

վերը հակադրել նրա ավանդաբղին — կենտրոնական կոմիտեին, նա փորձում էր սևացնել կուսակցական ապահովաբառը, վոր ի մի յեր ձուլում ամբողջ կուսակցությունը, և իր յելույթների ժամանակ կուսակցական ապահովաբառը հակադրում էր կուսակցական մասսային: Նա ապստամբեցնում էր կուսակցական յերիտասարդությունը կուսակցական հին գվարդիայի դեմ, նա ակնարկում էր այլասերման մասին, կենտրոնական կոմիտեյի լենինյան կադրի ոպպորտոնիստական այլասերման մասին:

Այսուամենայիվ կուսակցությունը լավ հասկացավ այդ զրպարտիչ մեղադրանքների և նոր հարցերի ելությունը: Նա կարողացավ գտնել ոպպոզիցիայի պլատֆորմի գաղափարական սունակը: Կուսակցությունը համոզվեց նրանում, վոր Լ. Տրոցկին և նրա կողմնակիցները տնտեսական կոնկրետ հարցերը լուծում են՝ դեկավարվելով սխալ պերսպեկտիվով, առաջնորդվելով Տրոցկու պերմանենա հեղափոխության թեորիայով (Լենինի և ամբողջ կուսակցության կողմից դատապարտված), վորը հեղափոխությունը ներկայացնում է վոչ թե պրոլետարիատի և գյուղացիության բլոկի հիման վրա, այլ նրա վրա, վոր պրոլետարիատը անպայման պետք է գյուղացիության դեմ ամենաղաժան պայքար մղե: Կուսակցությունը ոպպոզիցիայի կազմակերպչական պլատֆորմի մեջ նկատեց Լ. Տրոցկու վոչ բոյշեմիկյան հայացքների վերականգնումն մեր կուսակցության և ներկուսակցական հարաբերությունների վերաբերմամբ:

«Ն Ո Ր Ո Պ Թ Ո Զ Ի Ց Ւ Ա Ն»

Կուսակցությունը դատապարտեց 1923 թ. ոպպոզիցիան, յենթադրելով վոր ոպպոզիցիայի դեկավարները կարող են հասկանալ և գիտակցել իրանց սխալները և ընդ-

հանուր կուսակցական պլատֆորմի վրա կանգնել: Կուսակցությունն, ի դեմս իր կենտրոնական կոմիտեյի, չհետեւեց այն ընկերներին, վորոնք մերկացնելով Տրոցկուն և մյուս տրոցկիստներին, կամենում ելին անմիջապես կազմակերպչական հետեւություններ անել և հեռացնել լ. Տրոցկուն Պոլիտբյուրոյից: Կուսակցությունն, ի դեմս իր կենտրոնական կոմիտեյի, Զինովյեի և կամենեի այդ ձգտումը սխալ համարեց և ջանում էր Տրոցկուն պահպանել կուսակցության դեկավարիչ որդանում, համոզել ոպպոզիցիային և նրան լենինյան քաղաքական ռելյների վրա կանգնեցնել: Բնկ. ընկ. Զինովյեն և կամենել Տրոցկուն մենշևիկ հայտարարելով — մի քան, վոր թույլ չեր տալիս կենտրոնական կոմիտեյի մեծամասնությունը — ը. ը. Զինովյեն ու կամենել այս անգամ իրենք ոպպոզիցիա կազմեցին կենտրոնական կոմիտեյի դեմ, վորը չցանկացավ լ. Տրոցկուն հեռացնել Պոլիտբյուրոյից: Այսպես սկսվեց կազմակերպվել «ձախ» ոպպոզիցիոն հոսանքը, վոր պահանջում էր «աջ» Տրոցկուն հեռացնել կուսակցական դեկավարիչ պոստից:

Կուսակցությունը, վորին լավ հաստի յե լենինյան գիրքերից հեռացող ընկերների «ձախության» արժեքը, դեռ այն ժամանակ, «նոր ոպպոզիցիոն» տրամադրությունների առաջին քայլերից զգում եր, վոր այդ «ձախ» ոպպոզիցիան ինքն ել և կանգնում լենինյան տրամփիցիաներից նույնքան հեռու ուղիի վրա, վորքան լ. Տրոցկու հայցքներն ելին մեր տրամփիցիաներին թշնամական: XIV համագումարի նախորյակին ընկ. Զինովյեն և կամենել իրենց ոպպոզիցիոն պլատֆորմին վորոշ զաղափարական բազիս տվին, կենտր. կոմիտեյին մեղադրելով թագնված կիսատրոցկիզմի մեջ: Բայց միենույն ժամանակ «նոր ոպպոզիցիայի» դեկավարները հեղափոխության հիմնական հարցերի գնահատության խնդրում, տնտեսական քաղաքականու-

թյան պրոբլեմների գնահատության խնդրում, աստիճանաբար գլուխում ելին տրոցկիզմի գիրկը:

Կուսակցությունը նկատեց նրանց յելույթների մեջ այնպիսի նոտաներ, վոր նա վաղուց լսել եր Տրոցկու յելույթների մեջ։ Կուսակցությունը մատնացույց արեց վոր 1925 թվի ոպազողիցիայի գլամար հիմունքները հեռանում ելին բանվորա-գյուղացիական բլոկին վերաբերյալ՝ Լենինի տված հիմունքներից, վոր նոր ոպազողիցիան վերաբննում ե Լենինի տված մի շարք ամենախոշոր քաղաքական հարցերը։ «Նոր ոպազողիցիան» նորից առաջ բերեց մեր յերկրում սոցիալիզմի կառուցման գործը ավարտելու հնարավորության հարցը և դա լուծեց տրոցկիստական վողով։ Նա հայտարարեց, վոր իր տեսակետից՝ համաշխարհյան հեղափոխության հապաղումը կարող ե կորստի մատնել խորհրդային պետությունը՝ շնորհիվ մեր յերկրի տեխնիկական-տնտեսական յետամացության։ Լենինին և ամբողջ կուսակցությանը հակառակ, նա պնդում եր, վոր սոցիալիզմի հաղթանակը մեր յերկրում մեր սեփական ուժերով անհնարին ե, վոր սոցիալիստական շինարարության վճռական և անդիմադրելի խոչընդոտ կարող ե հանդիսանալ վոչ միայն ինտերվեցիան, այլ և ԽՍՀՄ տնտեսության տեխնիքական-եկոնոմիքական յետամացությունը։

Մեր յերկրում սոցիալիստական շինարարության պերստեկտիվների այդ հայացքների հետ «Նոր ոպազողիցիան» սերտ կապում եր և այն, վոր նոր տնտեսական քաղաքականությունը չի կարող պրոլետարիատի ղեկաստուրայի միակ ուղիղ և ուայի՛նալ քաղաքականությունը համարվել, վորի շնորհիվ մենք կարող եյինք համար սոցիալիզմին, այլ հանդիսանում ե իբրև բացարձակ նահանջ, ժամանակավոր մանյովը, զուտ «ուսական» առանձնահատկություն։ Կուսակցությունը ստիպված եր բացատրել «Նոր ոպազողիցիայի» առաջնորդներին, վոր նոր տնտեսական քաղաքա-

կանությունը վոչ այլ ինչ ե յեթե վոչ կապիտալիստական տարրերի վրա սոցիալիստական տարրերի գրոհն ապահովելու քաղաքականություն, միակ քաղաքականությունն ե, վոր ընդունակ ե ապահովելու սոցիալիստական հաջող շինարարությունը՝ հիմք ունենալով բանվորա-գյուղացիական սմիջկան։ Կուսակցությունը ստիպված եր հիշեցնել «նոր ոպազողիցիայի» առաջնորդներին կոմինտերնի այն վորոշումները, վորոնց մեջ արևմտյան յեվրոպական կոմունիստական կուսակցությունները, նորյան իսկ ավելի առաջադեմ յերկրներում, իշխանությունը գրաված պրոլետարիատի նորմալ տնտեսական քաղաքականությունը համարում են նոր տնտեսական քաղաքականությունը։ Ոպազողիցիան այնունետե այն տեսակետն ընդունեց, վոր մեր ամբողջ տնտեսությունը պետկապիտալիստական ե։ Նրա ներկայացուցիչներից մի քանիսը աշխատում ելին ապացուցել, վոր նույնիսկ մեր պետձեռնարկությունները պետկապիտալիստական ձեռնարկություններ են, վոր կոոպերացիան ընդհանուր առմամբ նույնպես պետական կապիտալիզմի մի տեսակն ե — վորից և անխուսափելի կերպով կասկածի յեր յենթարկվում մեր խորհրդային պետության պրոլետարական եյությունը, վորովհետեւ յեթե խորհրդային պետությունն իրեւ տնտեսական հիմք ունի պետական-կապիտալիստական ձեռնարկություններ, ապա նա անպայման պետք ե դառնա մի պետություն, վոր արտահայտում ե վոչ պրոլետարական շահեր։

Միաժամանակ ոպազողիցիան գերագնահատում եր գյուղի շերտավորման մոմենտները, չափազանցնում եր կուլակների վտանգի ուժեղացումն և տնտեսական քաղաքականության հիմնական հարցերը լուծելիս ի ցույց հանեց միջակ գյուղացուն մոռացության տալու հակումն։ Հենց այդ պատճառով ոպազողիցիան չքավոր գյուղացիությանը ոգնելու հարցը անջատում եր այն հարցից, վոր չքավորները պետք

Ե գյուղացիության հիմնական միջնյակ մասսայի հետ դաշնադիր լինեն: Ոպպոզիցիան չքավորի այդ պլոբլեմը քընուում եր վոչ իբրև պլոլետարիատի գիտատուրան ամրացնելու մասնավոր պլոբլեմ, այլ ինչպես «ինքնին» չքավորի անջատ վերցրած (ուստի և սխալ դրված) պլոբլեմ: Այդ բոլոր թեորետիկ շփոթը, այդ բոլոր քաղաքական բեկումները մեծանում են այնպիսի գեմագոգային և նաև քաղաքականապես սխալ լողունգներով, ինչպիսին ե հավասարության լողունգը, հավասարության, վոր անկարելի յերականացնել ներկա պայմաններում և վորին փափառում են, ոպպոզիցիայի կարծիքով, վոչ միայն բանվորներն, այլ և գյուղացիները:

Կուսակցությունը հարկադրված եր մատնացույց անելու ոպպոզիցիայի իդեոլոգներին այն հանգամանքի վրա, վոր նրանց հիմունքներն արդեն արոցկիզմի բողբոջներ են տալիս, և վոր մեր յերկրում սոցիալիզմի հաղթության հարցը, գեպի միջակ գյուղացին վերաբերությունների հարցը նրանք վճռում են վոչ այնպես, ինչպես վճռում եր Լենինը, այլ այնպես, ինչպես վճռում ե Տրոցկին: Իր աստիճանաբար անկումն արոցկիզմի գիրկը ոպպոզիցիան ապացուցեց նաև ներկուսակցական հարաբերությունների հարցի ձևակերպումով: Պայքարի լոգիկան նոր ոպպոզիցիային դրդեց պահանջելու ֆրակցիաների և խմբավորումների լեզալիզացիա և «ամնիստիա»՝ բոլոր հին քաղաքական ներկուսակցական, խմբավորումների համար, վորոնց ներկայացուցիչներին, ոպպոզիցիայի առաջարկով, պետք եր հրավիրել կուսակցության դեկավարման համար: Այսպիսով նոր ոպպոզիցիան պահանջում եր վոչ միայն իր, նոր ոպպոզիցիոն ֆրակցիայի լեզալիզացիա, այլ և պաշտպանում եր հին խմբավորումների ռեստավրացիա և նրանց լեզալիզացիա՝ կուսակցության ներսում:

1926 թ. ՄԻԱՅՅԱԼ ՈՊՊՈԶԻՑԻԱՆ

1926 թ. ամառը նոր ոպպոզիցիայի այդ ճանապարհորդությունը գեպի արոցկիզմ ավարտվեց կուսակցության կենտր. կոմիտեյի հույսայան պլենումին: Նոր ոպպոզիցիան այժմ առաջ քաշեց, իբրև իր առաջնորդ, Լ. Տրոցկուն և նույն իսկ այնտեղ հասավ, վոր Տրոցկու հետ միասին իրենց կոլեգիալ յելույթների մեջ ընդունեց 1923 թվի արոցկիզմի ոպպոզիցիան պլատֆորմի ուղիղ լինելը: Միացյալ ոպպոզիցիայի հեռացումը կուսակցություննից այժմ արտահայտվեց ամենաստարբեր ուղղություններով:

Միջազգային հարցերի վերաբերմամբ, միացյալ ոպպոզիցիան այն կարծիքն հայտնեց, վոր պետք ե անմիջապես դեմոնստրատիվ կերպով դուրս գալ անգլոռուսական կոմիտեյից և ըստ բանի եյության ձեռնարկեց միասնական ֆրոնտի տակտիկայի լենինյան հիմունքի վերաբննության: Ներքին քաղաքական հարցերում միացյալ ոպպոզիցիան յելնում եր այն հիմունքից, վոր մեր պետությունն արդեն «շատ հեռու յե պլոլետարական լինելուց», և վոր անհրաժեշտ ե պետության դասակարգային գիծը շտկել: Իսկ այդ շտկումը նոր ոպպոզիցիան հիմնովին այնպես ե ներկայացնում իրեն, ինչպես և 1923 թվի արոցկիստական ոպպոզիցիան: Յերկրի ինդուստրիալիզացիան նոր ոպպոզիցիան առաջարկում ե իրականացնել վոչ թե բանվորա-գյուղական բլոկի հիման վրա, այլ պլոլետարական պետության գյուղացիության վրա աստիճանաբար աճող ճընշման հիմունքի վրա, գյուղացիության հարկերի ավելացման, արդյունաբերության պլողուկտների մանրավաճառի և ոպպումի գների բարձրացման հիմունքի վրա: Միացյալ ոպպոզիցիայի աշքի ընկնող ներկայացուցիչների գիծը — դա գյուղացիությունից վորքան կարելի յե միջոցներ դուրս կոր-

Տեղու քաղաքականությունն ե,—մի պերսպեկտիվ, վորը թերետիկ կերպով ձևակերպվեց Պրեոքրտենսկու վերջին յելույթներում, ուր նա տալիս եր իր «Նախնական սոցիալիստական կուտակման որենքի» լրացուցիչ հիմնավորումը։ Անա այսպես եր ուզում ոպագողիցիան «Չտկել» պրոլետարական պետության դասակարգային գիծը։ Բայց չե վոր այդ գիծը, վոր վոչ մի առնչություն չունի լենիփեմի հետ, արդեն պարտված եր և կուսակցության կողմից դեն շպուտված գեռ ևս արոցկիզմի գեմ տեղի ունեցած դիսկուսիայի միջոցին։ Նրա հակակուսակցական, հակապրոլետարական բնույթը այժմ յուրաքանչյուր փոքր ի շատե գիտակից կուսակցականի համար պարզ ե։ Այստեղ մենք դարձյալ գործ ունենք «Ճախ» ֆրազայի հետ, վորով քողարկվում ե հակակուսակցական, հակապրոլետարական բովանդակությունը։ Դարձյալ գործ ունենք այնպիսի «Ճախ» պլատֆորմի հետ, վորի իրականացումը տանելու յերբ բանվորա-գյուղացիական սմիջկայի խախտման և պրոլետարական պետության քայլքայման։

Մեր կուսակցության կազմակերպչական սկզբունքները գնահատելիս նոր ոպագողիցիան ավելի հեռու գնաց, քան իր ժամանակին ընթանում եր Տրոցկու ոպագողիցիան։ Բացի ֆրակցիաների և խմբավորումների լեզալիզացիայի պահանջից, նոր ոպագողիցիան սկսում ե թագցնել մեր կուսակցության մեջ այնպիսի «փոքրիկ հոսանքներ», վորոնք պարզապես մենշեկյան բնույթ են կրում։ Այսպես որինակ, ոպագողիցիան, ի դեմս իր ներկայացուցիչների, «Ճախ» ե համարում նախկին «բանվորական ոպագողիցիայի» ղեկավարներից մեկին—Մեդվեդյան, վորը հանդես յեկավ մենշեկյան լիկվիդատորության ծրագրով։ Այդ ծրագիրն յենթադրում ե բանվորա-գյուղացիական սմիջկայի քակումն, մեր ձեռնարկությունների մասսայական հանձնումն կապիտալիստական կոնցեսսիոններին, պրոֆինտերնի լիկվիդացիան և այլն։

Մյուս կողմից, ոպագողիցիան հնարավոր գտավ հովանավորել այնպիսի յերփներանդ լիկվիդատորի, ինչպիսին ե կուսակցությունից արտաքսված Ոսսովսկին։ Այս վերջինս կուսակցության առաջ դրեց կուսակցության յերձումի անփուսափելիության պերապեկտիվը, զանազան կուսակցությունների լեզակացիայի հարցը, դրանց թվում և մենշեկինների ու եսերների լեզակացիայի հարցը։

Վոչ մի կասկած չկար, վոր կուսակցությունը կկարողանար հաղթել նաև այդ նոր ներկուսակցական հիվանդությունները, վորոնց մեջ նա տեսնում եր հին, իրեն արդեն վաղուց ծանոթ, միայն ավելի սուր կերպարանք ստացած հիվանդությունների նշանները։ Նա կկարողանար հաղթել նոր ոպագողիցիոն հոսանքը, վոր ամբողջ կուսակցության վերաբերմամբ այնպիսի դիրք եր ընդունել, վոր առաջ վոչ մի ոպագողիցիա չեր ընդունել։

Այդ բոլոր ոպագողիցիոն թեքումներն ու հոսանքները (մենք այստեղ մի կողմ ենք թողնում այնպիսի հոսանքներ, ինչպիսին են «բանվորական գրուպպան» և «բանվորական պրավդան»), վորովհետև նրանք արդեն դուրս են գալիս կուսակցության սահմաններից) իհարկե իրենց առանձնահատկություններն, իրենց հատուկ քաղաքական գեմքն ունեն։ Բայց նրանք բոլորն ել անկասկած մի վորոշ ընդհանուր բան ունեն. այդ ընդհանուրը կայանում է նրանում, վոր կուսակցական քաղաքականության հիմնական հարցերը նրանք բոլորը լուծում են վոչ-լենինյան, վոչ-բոյլշեկյան ձևով։

Նախ, այդ բոլոր թեքումներն ու հոսանքները սխալ են լուծում պրոլետարական պետության (վորի ձեւնեմեղ մոտ Խորհրդային իշխանությունը) դերի, նշանակության, կառուցման և զարգացման պերապեկտիվների հարցը։

Յերկրորդ, նրանք սխալ են վճռում պրոլետարիատի հարաբերականության հարցը աշխատավորների

ւայն խավերի վերաբերմամբ, այսինքն ամենից առաջ գյուղացիական ազգաբնակչության հիմնական մասսաների վերաբերմամբ, հեռանալով բանվորակառաջը աշխան բլոկի ամրապնդման լենինյան հիմունքից։ Յերրորդ, նրանք վոչ-լենինյան հայցք ունեն ներկուսակցական կազմակերպչական ոկզբունքների վրա։

Այս բոլոր ուղղություններով վերոյիշյալ բոլոր ոպպացիոն հոսանքները դիմում ելին հարցերի լենինյան պրոլետարական ձևակերպումից գեպի վոչ-լենինյան, մանրբուրժուական ձևակերպումը։ Յեկ հենց դրա համար ել նրանք դատապարտվեցին լենինյան կուսակցության կողմից։

1927 թ. Ո Պ Պ Ո Զ Ի Ց Ի Ռ Ո Կ Ը

Վոչ մի կասկած չկա, վոր ոպպացիոն բլոկի իդեոլոգները իրենց յելույթների մեջ ծայրը ծայրին չեն հասցնում, ամեն քայլափոխում նրանք իրար հակածառող կարծիքներ և դատողություններ են հայտնում։ Սակայն մենք այստեղ չենք կարող կանգ առնել այդ հակածառությունների անալիզի վրա, այլ կարևոր ենք համարում հիշել լոկ այն հիմնական գաղափարական կետերը, վորոնք բնորոշում են ոպպացիոնի քաղաքական գեմքը և վորոնք անկամած բղխում են 1926 և 1927 թ. ձևակերպված՝ հեղափոխության զարգացման վերաբերմամբ տրոցկիստական հայցքներից։

Ոպպացիոն բլոկի հենց իրենք լիդերները խոստավանվում են, վոր կենտրոնական, ամենազլավոր և վճռական տարածայնությունը, վոր նրանց բաժանում ե կուսակցությունից, կայանում ե մեր յերկրում սոցիալիզմ կառուցելու հնարավորության հարցի վերաբերմամբ ոպպացիոնի և կուսակցության տված տարբեր պատաս-

խաններում։ Ոպպացիոնի լիդերները պնդում են, վոր մեր յերկրի տեխնիքական յետամացության շնորհիվ, գյուղական ազգաբնակչության գերակշռության շնորհիվ, պլոյետարական դիկտատուրան բավականաչափ ներքին ուժեր չունի ԽՍՀՄ մեջ հասարակական հարաբերությունները սոցիալիստական ձևով վերակառուցելու համար։ Գլխավոր հարցը նրանումն ե, թե կարո՞ղ ե արդյոք պրոլետարիատը, պետական իշխանությունը իր ձեռքում ունենալով, գյուղը սոցիալիստական զարգացման ռելիների վրա փոխադրել։ Ոպպացիոնի լիդերուները այդ հարցին տալիս են բացասական պատասխան։ Նրանք պնդում են, վոր պրոլետարական դիկտատուրայի գոյությունը մեզ մոտ, չի փոփոխում այն փաստը, վոր գյուղը զարգանում ե կապիտալիստական ուղղությամբ և վոր նրա զարգացումը յենթակա յեկապիտալիստական զարգացման որենքներին և միմիայն այդ որենքներին։ Յեթե այդ այդպես լիներ, այն ժամանակ, ինարկե, պրոլետարական դիկտատուրայի պերսպեկտիվները շատ ախուր կլինեին։ Սակայն բանը նրանումն ե, վոր այդ ամենեին այդպես չե։ Բանը հենց նրանումն ե, վոր պրոլետարական պետության ազգեցությունը գյուղի զարգացման վրա, ապահովում ե գյուղում անկառած յերեան յեկող կապիտալիստական տենդենցների հաղթահարումը և գյուղացիության հիմնական չքավոր և միջակ գյուղացիական մասսայի շարժը սոցիալիստական ուղղությամբ։ Իշխանության դեկի մոտ կանգնած պրոլետարիատը տնտեսական և քաղաքական ազգեցության բոլոր իթանները շարժման մեջ դնելով ապահովում ե գյուղի տընտեսության կողեկտիվ ձևերի զարգացման հաջողությունը—աշխատավոր գյուղացիության լայն խավերի մասսայական կոռպերացումը, վորի միջոցով, մի շարք միջանկալ աստիճաններից հետո, գյուղացիությունը անցնելու յերատագության լիակատար համայնացման։ Բոլորովին պարզ

ե, վոր հիշյալ հարցի վերաբերյալ տարբերությունը ոպա-
պողիցիայի և կուսակցության հայացքների միջև նույն է,
ինչը Տրոցկուն բաժանում եր լենինից:

Իսկ այդ տարբերություններից շատ բան ե բղխում:
Սոցիալ-դեմոկրատական պատասխան տալով այն հարցին,
թե հեղափոխությունը բավական ներքին ուժեր ունի
թե վոչ՝ սոցիալիզմը կառուցելու համար, արոցկիստներն
անխուսափելիորեն պետք ե պրոլետարական դիկտատու-
րայի ներկա դրության վերաբերմամբ հանգեն լիկվիդա-
տորական յեղրակացությունների: Հակառակ փաստերի, հա-
կառակ ոբյեկտիվ տվյալների, նրանք հարկադրված են,
պաշտպանելով իրենց տեսակետը՝ ԽՍՀՄ մեջ սոցիալիզմ
կառուցելու անհնարավորության վերաբերմամբ, խեղա-
թյուրել իրերի իսկական դրությունը և կիսամենչկիկյան
գնահատում տալ սոցիալիստական շինարարության այն
պրոցեսներին, վորոնք հաջող զարգանում են մեր յերկրում:

Յեթե ճշմարիտ ե, վոր պրոլետարական քաղաքը չի
կարող հաղթել գյուղում իրը թե տիրող կապիտալիզմին,
այդ դեպքում անխուսափելի կերպով պետք ե յեղրակա-
ցնել, վոր պրոլետարական դիկտատուրան կարող ե պահ-
պանվել՝ միմիայն չորհիվ անընդհատ զիջումներ անելով
կապիտալիստական ուժերին. այդ դեպքում անխուսափելի
յեն վողքերը «այլասերման», «տերմիդորի», պետապա-
րատում «կուլակ-նեպմանական ճնշման» մասին և այլն
արձակած վողքերը:

Այդ նույն գնահատականը, իր հերթին, առաջ ե բե-
րում կիսամենչկիկյան վերաբերմունք դեպի բանվորա-
կան հարցը: Տրոցկիստներն, ըստ բանի եյության, խոր-
հրդային բանվորին առաջարկում են նայել խորհրդային
իշխանության վրա վոչ իբրև իր պետության վրա, այլ
իբրև մի պետության վրա, վոր «շատ նեռու յե պրոլետա-
րական լինելուց»: Ըստ վորում նրանք մենշևիկների նման

բանվոր դասակարգի շահերը հակադրում են բանվորական
պետության: Տրոցկիստներն, իրենք այդ չնկատելով,
ակտում են բանվոր դասակարգին պատվաստել պետության
վերաբերմամբ այնպիսի հայացքներ, վորոնք ճշմարիտ կի-
նելին միմիայն այն գեղքում, յեթե պետությունը մեզ
մոտ բուրժուական լիներ: Նրանք, որ-ավուր, բանվորական
մասսաներում հարաբերությունների այնպիսի «վոճ» են
մշակում մեր պետության վերաբերմամբ, վոր բնական և
ճշմարիտ կիներ՝ յեթե հարկավոր լիներ տապալել այդ
պետությունը՝ վորպես պրոլետարիատին խորթ պետու-
թյուն: Նրանց գնահատականների, ծրագրների, թեզիների,
հողվածների, թերթիկների մեջ պրոլետարիատը դիտվում
ե վոչ վորպես սոցիալիզմի շնարար, վոր իր ձեռքումն
ունի պետական իշխանությունը, այլ վորպես շահագործ-
ման ոբյեկտ մի այնպիսի պետության համար, վորը «շատ
հեռու յե պրոլետարական լինելուց»:

Բայց չե վոր մեզ մոտ պետությանը դեկավարում ե
կոմունիստական կուսակցությունը, վորը հետևաբար պա-
տասխանատու յե պետության «այլասերման» համար: Պե-
տությունը, ոպպոզիցիայի կարծիքով, այլասերվում ե
շնորհիվ նրա, վոր այլասերվում ե կուսակցությունը: Իսկ
յեթե կուսակցությունը այլասերվում ե, ապա պետք ե
կազմել նոր, յերկրորդ կուսակցություն. այդպես ել
վարվում ե ոպպոզիցիան: Այդպես ե դեպի մենշևիզմը վոր-
վոր ոպպոզիցիոն լոգիկան:

Ոպպոզիցիան քողարկվելով «միաձուլության» մասին
իր արձակած կոչերով՝ նոր կուսակցություն ե
ստեղծում լենինյան կուսակցության դեմ կը ռ-
վելու համար. նա ուզում ե վերջ դնել այն ոեժիմին,
վորի պայմաններում իրականացվում ե պրոլետարիատի
դիկտատուրան, պրոլետարիատի միասնական և միակ կո-
մունիստական կուսակցության դեկավարությամբ:

Սակայն ամենեին պատահական յերկույթ չե այն, վոր մեզ մոտ Հոկտեմբերյան հեղափոխության սկզբից կոմունիստական կուսակցությունը հանդիսանում ե իբրև միակ լեզար կուսակցություն. ընդհակառակը, դա մեր յերկում պրոլետարիատի դիկտատուրայի հիմնական սկզբունքներից մեկն ե: Պրոլետարիատի դիկտատուրան, առանց կոմունիստական կուսակցության այդ քաղաքական մոնոպոլիսի, չի կարող դիմել դեպի սոցիալիզմ՝ ճնշելով իր դասակարգային թշնամիներին և կեղեքիչների ձեռքերից ազատազրելով կեղեքվաճներին: Թեպես և մեր յերկիրը բավականաչափ ներքին ուժեր ունի սոցիալիզմ կառուցելու համար, բայց նա դրված ե շատ աննպաստ պայմանների մեջ, վորպես առաջին յերկիր, վոր ճեղքել ե իմպերիալիստական ֆրոնտը, վորպես առաջին յերկիր, ուր գործնականապես իրականացվում ե սոցիալիզմ՝ իմպերիալիստական յերկների թշնամական ողակով շրջապատված, նաև շրջապատված ամենաբազմաթիվ մանր բուրժուազիայով, վորը քիմիապես արտադրում ե խոշոր բուրժուազիան: Այդիսի պայմաններում՝ կոմունիստական կուսակցության քաղաքական մոնոպոլիան հանդիսանում ե վորպես պրոլետարիատի դասակարգային դիկտատուրայի իրականացման անհրաժեշտ պայման:

Պայքարը մեր կուսակցության դեմ, այն կուսակցության, վոր զեկավարում ե պրոլետարիատի դիկտատուրան, մի այնպիսի պայքար ե, վորը միաժամանակ փորձ ե անում մի ուրիշ կուսակցություն ստեղծելու՝ պրոլետարական պետության դեկը կոմունիստական կուսակցության ձեռքից կորցելու համար—այդ պայքարը հիշած պայմաններում անխուսափելի կերպով փոխվում ե պրոլետարական դիկտատուրայի դեմ մղվող մի պայքարի՝ հոգուտ բուրժուական տիպի քաղաքական դեմոկրատիայի: Յեթե կարելի յե

«արդարացնել» յերկրորդ կուսակցություն ստեղծելու ձրգառումը, ինչու չի կարելի «արդարացնել» և յերրորդ, չորրորդ, հինգերորդ և ավելի կուսակցություններ ստեղծելու ձգտումը: Մահմանագիծը գտնվում ե հենց այստեղ, ուր սկզբում ե կոմունիստական կուսակցության քաղաքական մոնոպոլիայի ժխտումը և սկզբում ե յերկրորդ կուսակցության համար մղած պայքարը: Յերկրորդ կուսակցություն սկզբունքորեն թույլ տալը արդեն նախավճռում ե սկզբունքորեն թույլատրել և ուրիշ մյուս կուսակցություններ: Այդպիսով, Փրակցիայի վերածվելը մի ուրիշ կուսակցության ճանապարհ ե բանում այն պայքարի համար, վոր մղվում ե պրոլետարիատի դիկտատուրայի դեմ՝ հոգուտ բուրժուական քաղաքական գեմոկրատիայի:

Իսկ յեթե գոյություն ունեն մի քանի քաղաքական կուսակցություններ, վորոնք պրոլետարական պետության քաղաքականության հիմնական հարցերում բաժանվում են, յեթե այդ կուսակցությունները պայքարում են զանազան դասակարգերի պայքարի պայմաններում, դասակարգային պայքարի ամենաբարդ պայմաններում—ապա այդ տարածայնությունները, քաղաքականության հիմնական հարցերի վերաբերմանը բունած դիրքերը չեն կարող դասակարգային բնույթ չկրել, չեն կարող տարբեր դասակարգային արմատներ չունենալ:

Հենց այդ պատճառով կուսակցությունը վճռականութեն և ամեն միջոցներով մաքառելու յե այն բոլոր փորձերի դեմ, վոր խախտելու յեն պրոլետարական դիկտատուրայի ուժիմը, վորի համար բնորոշ ե՝ պետության դեկավարումը միասնական և միակ կոմունիստական կուսակցության կողմից:

Կուսակցության դեմ դավագրելով, ոպպոզիցիան ցույց ե տալիս, վոր նա ձգտում ե թագանել իր ապարատը,

անկուսակցական տարրերի ոգնությամբ ստեղծած իր «տեխնիկան»։ Այնպիսի դրություն ե ստեղծվում, յերբ նոր կուսակցության սաղմի շուրջը խմբվում են անկուսակցականների վորոշ խավեր, վորոնք ներգրավված են՝ մասնակցելու կուսակցության դեմ մղած պայքարին։ Բանի ելությունը չի փոխվում նրանից, վոր ոպպողիցիոներները իրենց նպատակ են դնում պայքարը հոգուտ կոմունիզմի։ Փաստը մնում ե փաստ։ Կուսակցության դեմ մղած պայքարը ուղեկցվում ե ֆրակցիոն կենտրոնների շուրջը վորոշ անկուսակցական «ակտիվ» ստեղծելով։ Մյուս կողմից, այս վերջինս իր քաղաքական քայլերում ամենաին չի դեկավարվում կոմունիստական, բոյլշեիկյան յելակետերով։ Նա ունի իր կապերը, իր իդեաները, իր, առժամանակ հանգած, քաղաքական պլանները, վորոնք վերածնվում են շնորհիվ նրա, վոր մտնում են այնպիսի քաղաքական կազմակերպության մեջ, վորի գոյության իմաստը կայանում է կոմունիստական կուսակցության դեմ պայքարելը։

Կուսակցության դեմ մղած պայքարում անկուսակցականներին ներգրավելը այն հետևանքն ունի, վոր նոր կուսակցության սաղմը «ուռածանում ե» այնպիսի տարրերով, վորոնք առաջ խորհում ենին պրոլետարական դիկտատուրայի ուժիմի դեմ քաղաքական գործողությունների ձեռնարկելու մասին և այժմ լայնացնում են իրենց գործնեյւոթյունը՝ քողարկվելով այն հանգամանքով, վոր կուսակցության, անդամները իրենց կուսակցության, պրոլետարիատի դիկտատուրան դեկավարող կուսակցության դեմ դավադրությամբ պայքար են մղում։ Շնորհիվ այդ հանգամանքի ստեղծվում ե այնպիսի մի դրության հնարավորություն, յերբ նոր կուսակցության սաղմը, հակառակ կուսակցության ոպպողիցիոն անդամների անձնական ձըդտումների և ցանկությունների, վարագույր ե դառնում հակախորհային քաղաքական տարրերի համար։

Ոպպողիցիան չի նկատում, վոր սուր կերպարանք տալով կուսակցության դեմ իր պայքարին, փաստորեն յերկրորդ կուսակցություն կազմելու ուղիի վրա կանգնելով, նա ոքյեկտիվ կերպով սկսում ե պայքարել պրոլետարական դիկտատուրայի ուժիմի դեմ՝ հոգուտ բուժության քաղաքական դեմոկրատիայի ուժիմի։ Նա չի նկատում, վոր կուրացած լինելով ֆրակցիոն պայքարով, հասել ե այն գծին, վորից անցնելը նշանակում ե պրոլետարական դիկտատուրայի թշնամին դառնալ։

Միևնույն ժամանակ ոպպողիցիան փորձում ե հակաբոյլշեիկյան մուլթյուն կազմակերպել նաև միջազգային մասշտաբով։ Ամեն կերպ վարկաբեկ անելով կոմինտերնը և միջազգային կոմունիստական շարժման հիմնական մարտական ակտիվը, ոպպողիցիայի լիդերները փորձում են միջազգային «ոզոստոյան բլոկ» կազմակերպել այնպիսի ուենեդատ խրմբակներից, ինչպիսին են Ռուսական Ֆիդերլեյն Մարտի կամաց գերմանիայում, Սուվարինի, Մոնաստիր-Ռուսմերի խմբակը գերմանիայում և այլն։ Այդ փորձերում նշանակալիցն այն ե, վոր այդ միջազգային ուենեդատային միության մեջ «հավաքվում են» հենց այն խմբակները, վորոնք ԽՍՀՄ դեմ պատրաստվող իմպերիալիստական հարձակման պարագաներում ձգտում են Արևմտյան Յեվրոպայի բանվորական մասսաներին ապացուցել, վոր ԽՍՀՄ այլևս պրոլետարական դիկտատուրայի յերկիր չե, այլ հակա-հեղափոխական ուժերի զարգացման փակոր ե թե ԽՍՀՄ ներսում և թե նրանից դուրսը։ Ինչով ե տարբերվում այդ դիրքը սոցիալ-դեմոկրատների դիրքից։

Յեկամի քայլ նույն ուղղությամբ — և ոպպողիցիան վերջնականապես կոլորվի մենշենիզմի դիրկը։ Ամբողջ կուսակցությունը, նրա կողմից դեկավարվող պրոլետարիատը և պրոլետարիատի կողմից դեկավարվող աշխատավորների լայն մասսաները վերջ կդնեն ոպպողիցիայի զուր ջանքերին — խախուել պրոլետարական դիկտատուրայի ուժիմիը։

ԸՆԿ. ՍՏԱԼԻՆԻ ԿԱՐԾԻՔԸ ՈՊՈՌԶԻՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ
(Հատվածներ նառից)

Կե-ի քանիցս արած նախազգուշացումները ուշքի չբերին ոպպողիցիային, վորը շարունակում եր իր սնամեջ և մակերեսային կարծիքները պաշտպանել՝ դիմելով նույն իսկ անլեզալ միջոցների։ XV համագումարի նախորյակին կենտրոնական կոմիտեն կուսակցությունից հեռացրեց Զինովյան և Տրոցկուն։ XV համագումարը հաստատեց այդ վորոշումը միաձայն, և վորոշեց (կրկին միաձայն) հեռացնել նաև կամենկին, ինչպես և մի շարք ուրիշ ոպպողիցեռներների։ XV համագումարի նախորյակին ֆրակցիոն գործնեյությունը հսկայական չափեր եր ընդունել և ուժեղացել եր. բոլոր կուսկազմակերպությունների մեջ լայն դիմկուսիա բացվեց, վորը ցույց տվեց ոպպողիցիայի իդեյական սնանկությունը։ Քվեարկությունը ցույց տվեց, վոր ոպպողիցիայի կողմանկիցները կարողացել են շահել ձայների մոտավորապես մեկ տոկոս։ Իսկ ի՞նչ հարցերում ե ոպպողիցիան տարակարծիք։

XV համագումարում ընկ. Ստալինը այսպես բնորոշեց այդ տարածայնությունները.

— «Յես կարող եմ թվել յոթ հիմնական հարց, վորոնց առիթով ծագել են տարածայնություններ կուսակցության և ոպպողիցիայի միջև։ Առաջին։ Մեր յերկրում սոցիալիստական հաղթական շինարարության հնարավորության հարցը։ Ոպպողիցիան ժխտում է սոցիալիստական հաղթական շինարարության հնարավորությունը մեր յերկրում։ Իսկ ժխտելով այդ հնարավորությունը, նա բացարձակ և ուղղակի գլորվում է մենակիների դիրքը։ Իսկ ի՞նչ ե նշանակում այդ տեսակետը։ Դա նշանակում ե կապիտուլիացիա։ Ումմ առաջ։ Հարկավ, մեր յերկրի կապիտուլիացիան տարրերի առաջ։ Եղի ում առաջ։ Ինարկե-

համաշխարհային բուրժուազիայի առաջ։ Իսկ հեղափոխական ֆուազները, իսկ հեղափոխական ժեստիկուլիացիան, ուր մնացին դրանք։ Դրանք չքացան։ Մի լավ թափահարեցեք մեր ոպպողիցիային, դեն շպրտեցեք հեղափոխական ֆրազիոններին և դուք կտեսնեք, վոր նրանց մոտ հաստակում նատած ե կապիտուլիացիա։

— Յ ե ր կ ր ո ր դ։ Պրոլետարիատի դիկտատուրայի հարցը։ Կամ արդյոք մեզ մոտ պրոլետարիատի դիկտատուրա, թե վոչ։ Հարցը մի փոքր տարրինակ ե։ Այսուամենայնիվ ոպպողիցիան դնում ե այդ հարցը իր ամեն մի հայտարարության մեջ։ Ոպպողիցիան ասում ե, թե մեզ մոտ տերմիգորյան այլասերում ե։ Իսկ ի՞նչ ե նշանակում դա։ Դա նշանակում ե, թե մեզ մոտ չկա պրոլետարիատի դիկտատուրա, թե մեզ մոտ քանդվում ե, յետյետ ե գնում թե անականությունն և թե քաղաքականությունը, ու մենք գնում ենք վոչ թե դեպի սոցիալիզմ, այլ դեպի կապիտալիզմ։ Այդ ամենը մի փոքր տարրինակ ե, հիմարություն ե։ Բայց ոպպողիցիան պնդում ե իր ասածի վրա։ Ահա ձեզ, ընկերներ, դարձյալ մի տարածայնություն։ Դրա վրա յե հենվում Տրոցկու հայտնի թեզը կլեմանսոյի մասին։ Յեթե իշխանությունն այլասերվել ե կամ այլասերվում ե, միթե արժե խնայել նրան ու պաշտպանել։ Պարզ ե, վոր չարժե։ Յեթե ստեղծվի նպաստավոր կացություն այդ տեսակ իշխանությունը վերացնելու համար, դիցուք, յեթե թշնամին մոտենա Մոսկվային ութսուն կիլոմետրի վրա, միթե պարզ չե, վոր հարկավոր ե ոգտագործել կացությունը՝ մաքրելու այդ իշխանությունը և անելը դնելու կլեմանսոյական, այսինքն արոցկիստյան իշխանություն։ Պարզ ե, վոր այստեղ վոչինչ լենինյան չկա։ Դա—մաքուր մենշեվիզմ ե։ Ոպպողիցիան հասել ե մենշեվիզմին։

— Յ ե ր ր ո ր դ։ Բանվորի և միջին գյուղացու բլոկի հարցը։ Ոպպողիցիան շարունակ թագցնում եր իր բացա-

սական վերաբերմունքը դեպի այդորինակ բլոկի գաղափարը։ Նրա պլատֆորման, նրա հակաթեղերն ուշազրով են վհչ այնքան նրանով, ինչ ասված ե այնտեղ, վորքան նրանով, ինչ աշխատում եր թագցնել բանվոր դասակարգից ոպպողիցիան։ Բայց ահա յերևաց ի. Ն. Սմիրնովը — նույնպես ոպպողիցիայի լիդերներից մեկը, վոր արիություն ունեցավ ասել ճշմարտությունն ոպպողիցիայի մասին, լույս աշխարհ հանելով նրան։ Ու ինչ պարզվեց։ Պարզվեց, վոր մենք գնում ենք դեպի կործանումը և յեթե կամենում ենք փրկվել, պետք ե յերես դարձնենք միջակ՝ գյուղացուց։ Այնքան ել խելոք բան չե, բայց պարզ ե։ Այստեղ ել մենշևիկյան իսկական դեմքը վերջապես պարզվեց բոլորի համար։

— Չորրորդ։ Մեր հեղափոխության բնույթի հարցը։ Քանի վոր ժխտվում ե մեր յերկրում սոցիալիզմ կառուցելու հնարավորությունը, քանի վոր ժխտվում ե պրոլետարիատի դիլտատուրայի գոյությունը, բանվոր դասակարգի և գյուղացիության բլոկի անհրաժեշտությունը, այդ դեպքում ինչ ե մնում մեր հեղափոխությունից, նրա սոցիալիստական բնույթից։ Պարզ ե — վոշինչ, բացարձակապես վոշինչ։ Պրոլետարիատն իշխանության գլուխ անցավ, իր վախճանին հասցըեց բուրժուական հեղափոխությունը, գյուղացիությունն այլևս գործ չունի հեղափոխության հետ, վորով հետեւ նա արդեն ստացավ հող, — նշանակում ե պրոլետարիատը կարող ե հեռանալ, տեղ տալով մյուս դասակարգերին։ Ահա ձեզ ոպպողիցիայի տեսակետը՝ յեթե քրքրենք ոպպողիցիոն հայացքների արմատները։ Ահա ձեզ մեր ոպպողիցիայի կապիտուլիտիայի բոլոր արմատները։ Իզնուք չե նրան գովարանում Աբրամովիչը։

— Հինգերորդ։ Լենինյան տեսակետի հարցը գաղութային հեղափոխությունները դեկավարելու ժամանակ։ Լենինը յելակետ ուներ իմպերիալիստական յերկրների և հարստահարված յերկրների, իմպերիալիզմի յերկրներում և

գաղութային յերկրներում կոմունիզմի քաղաքականության տարբերությունը։ Յելնելով այդ տարբերությունից, նա ասում եր դեռ պատերազմի ժամանակ, թե հայրենիքի պաշտպանության գաղափարը — անընդունելի ու հականեղափոխական ե կոմունիզմի համար՝ իմպերիալիզմի յերկրը ներում, միանգամայն ընդունելի ու արդարացի յե՝ հարստահարված, իմպերիալիզմի դեմ պատերազմող յերկրներում։ Հենց այդ պատճառով նա ընդունում եր վորոշ ժամանակաշրջանում աղքային բուժուազիայի հետ գաղութային յերկրներում բլոկ և նույնիսկ միություն հաստատելու հնարավորությունը՝ յեթե այդ բուժուազիան պատերազմ ե մզում իմպերիալիզմի դեմ և յեթե նա չի խանգարում կոմունիստներին՝ դաստիարակելու բանվորին ու գյուղացիական ընչազուրկներին կոմունիզմի վորով։ Ոպպողիցիայի մեղանչումն այստեղ կայանում ե նրանում, վոր նա վերջնականապես անջատվում ե լենինի տեսակետից, գլորվելով դեպի Ա Խնտերնացիոնալի տեսակետը, վոր ժխտում ե հեղափոխական պատերազմներին (իմպերիալիզմի դեմ) գաղութային յերկրներում աջակցելու նպատակահարմարությունը։ Հենց դրանով են բացարկվում այն ամեն չի դժբախտությունները, վոր ունեցավ մեր ոպպողիցիան չինական հեղափոխության հարցում։ Ահա ձեզ մի տարածայնություն ևս:

— Վեցերորդ։ Միասնական ֆրոնտ տակտիկայի հարցը համաշխարհային բանվորական շարժման մեջ։ Ոպպողիցիայի մեղանչումն այստեղ նրանումն ե, վոր նա անջատվում ե լենինյան տակտիկայից՝ բանվոր դասակարգի միլիոնավոր մասսաներին աստիճանաբար կոմունիզմի կողմը նվաճելու հարցում։ Բանվոր դասակարգի միլիոնավոր մասսաները գրավվում են կոմունիզմի կողմը վոչ միայն կուսակցության ճիշտ քաղաքականության դեպքում։ Կուսակցության ճիշտ քաղաքականությունը խոշոր գործ ե, բայց

դա դեռ բոլորը չեւ Վորպեսզի բանվոր դասակարգի միլ-լիոնավոր մասսաներն անցնեն կոմունիզմի կողմը, դրա համար անհրաժեշտ է վոր իրենք մասսաները իրենց սեփական փորձով համոզվեն կոմունիզմի քաղաքականության ճշտության մեջ։ Յեվ վորպեսզի մասսաները համոզվեն, դրա համար անհրաժեշտ է ժամանակ, անհրաժեշտ է կուսակցության հմուտ, կարող աշխատանք՝ համոզելու միլ-լիոնավոր մասսաներին, թե կուսակցության քաղաքականությունը ճիշտ է։ Մենք իրավացի եյինք դեռ 1917 թ. ապրիլին, քանի վոր մենք գիտեյինք, վոր գործը վերաբերում է բուրժուազիային տապալելուն ու խորհրդային իշխանությունն հաստատելուն։ Բայց մենք այն ժամանակ բանվոր դասակարգի լայն մասսաներին չեյինք կանչում ապատամբության։ Ինչու վորովհետև մասսաները հնարավորություն չունեյին համոզվելու, թե մեր քաղաքականությունն իսկապես ճիշտ է։ Միայն այն ժամանակ, յերբ եսերների և մենշևիկների մանր բուրժուական կուսակցությունները խայտառակվեցին հեղափոխության հիմնական հարցերում, յերբ մասսաներն սկսեցին համոզվել մեր քաղաքականության ճշտության մեջ,— այն ժամանակ մենք առաջնորդեցինք մասսաներին դեպի ապատամբություն։ Յեվ վորովհետև մենք ժամանակին առաջնորդեցինք մասսաներին դեպի ապատամբություն, ենց այդ պատճառով ել այն ժամանակ հաղթություն տարանք։ Անա թե ինչումն են միասնական ֆրոնտի գաղափարի արմատները։ Միասնական ֆրոնտի տակտիկան իսկապես նրան համար գործադրեց Լենինը, վորպեսզի դյուրություն տակապիտալիստական յերկրների բանվոր դասակարգի սոցիալ-դեմոկրատական համաձայնողականության նախապաշարմունքներով վարակված՝ միլիոնավոր մասսաներին անցնելու կոմունիզմի կողմը։ Ոպպոզիցիայի մեղանչումը նրանում է, վոր նա պարզապես բացառում է այդ տակտի-

կան։ Մի ժամանակ հիմարաբար ու անմտորեն իր տակտիկայով հավատակված, նա ամեն կերպ վողջունում եր գենսովետի (Անգլիայում) հետ համաձայնելու գործը, յենթադրելով, թե այդ համաձայնությունը հանդիսանում է «խաղաղության ամենալուրջ յերաշխիքներից մեկը ընդդեմ ինտերվենցիայի», հանդիսանում է «ամենալուրջ միջոցներից մեկը»։ Յեվրոպայում ռեֆորմիզմը անվտանգ դարձնելու համար. (Զինովյեսի ղեկուցումը ՀԿԿ ԽIV համագումարում): Բայց չարաչար հիասթափվելով իր հույսերի մեջ, թե ռեֆորմիզմը կարելի յեւ անվտանգ դարձնել Պերսելների և Խիկուերի ոգնությամբ, ոպպոզիցիան հետո դիմեց ուրիշ ծայրահեղության, պարզապես ժխտելով միասնական ֆրոնտի տակտիկայի գաղափարը։

Անավասիկ ձեզ, ընկերներ, դարձյալ մի տարածայնություն, վոր ցույց եւ տախս, թե ոպպոզիցիան բոլորովին հեռացել եւ միասնական ֆրոնտի լենինյան տակտիկայից։

— Յոթերորդ։ Լենինյան կուսակցականության ու լենինյան միաբանության հարցը Համ. Կ.Կ. և Կոմինտերնի մեջ։ Ոպպոզիցիան այստեղ բացորոշ անջատվում է լենինյան կազմակերպչական տեսակետից, կանգնելով յերկորդ կուսակցություն կազմելու, նոր ինտերնացիոնալ կազմելու ճանապարհի վրա։ Անա ձեզ Շ հիմնական հարցերը, վորոնք մատնանշում են, վոր բոլոր այդ հարցերի վերաբերմամբ ոպպոզիցիան գլորվել եւ դեպի մենշևիզմը։ Կարելի՞ յեւ արդյոք ոպպոզիցիայի այդ մենշևիկյան շահութը կարելի՞ յեւ արդյոք ոպպոզիցիայի այդ մեր կուսակցության հայացքները համարել համակերպ մեր կուսակցության գաղափարախոսության, նրա ծրագրի, նրա տակտիկայի, Կոմինտերնի տակտիկայի և լենինիզմի կազմակերպչական ադաջադրման հետ։ Վհչ մի դեպուտմ և վհչ մի ըսպեց Պուք կասեք. ինչպես կարող եր ստեղծվել մեզ մոտ այդպիսի ոպպոզիցիա, ուր են նրա սոցիալական արմատները։

Յես կարծում եմ, վոր ոպպողիցիայի սոցիալական արմատները գտնվում են քաղաքի մասը բուրժուական խավերի քայլայման փաստի, մեր զարգացման կացության մեջ, նրանում, վոր այդ խավերը, պրոլետարիատի դիկտատուրայի ռեժիմից դժգոհ, ցանկանում են այդ ռեժիմը փոխել, «բարելավել»՝ բուրժուական դեմոկրատիա հաստատելու վորով։ Յես արդեն ասացի վերեում, վոր մեր առաջինացման, մեր արդյունաբերության աճման, տնտեսության սոցիալիստական ձեռի տեսակարար կշռի աճման հետևանքով՝ մանր (առանձնապես քաղաքային) բուրժուագիայի մի մասը քայլայվում ու տապալվում է։ Ոպպողիցիան արտացոլում է պրոլետարական հեղափոխության ռեժիմից դժգոհ այդ խավերի արտունչը։ Ահա թե ուր են ոպպողիցիայի սոցիալական արմատները։

**ՀԱՄ. Կ. Կ. (Բ) XV ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԲԱՆԱԳԵՎԸ
ՈՊՊՈԶԻՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ
(Ընդունված և միաձայն)**

«XV համագումարը լսելով այն հանձնաժողովի զեկուցումը, վոր մանրազնին քննել ե ոպպողիցիային վերաբերող բոլոր նյութերը, արձանագրում ե հետևյալը.

1. Իդեոլոգիայի ասպարիզում ոպպողիցիան տակտիկական բնույթ կրող տարածայնություններից ծրագրային բնույթի տարակայնությունների յե անցել՝ կենինի տեսակետները վերաքննության յենթարկելով ու գեղի մենշևիզմի զիրքերը գլորվելով։ ԽՍՀՄ մեջ սոցիալիզմ կառուցելու հաղթական հնարավորության ժխտումը և հետևապես, մեր հեղափոխության սոցիալիստական բնույթի ժխտումը, պետական արդյունաբերության սոցիալիստական բնույթի ժխտումը, ինչպես և զյուղի զարգացման սոցիալիստական ուղիների ժխտումը, վերջապես, ԽՍՀՄ

մեջ փաստորեն գոյություն ունեցող պրոլետարական դիկտատուրայի ժխտումն («տերմիդոր») ու վերջինիս հետ կապ ունեցող կապիտուլիտացիան ու պարտվողականությունը—ահա զաղափարական վողջ այս իրազրումը տրոցկիստական ոպպողիցիան դարձել են մանր-բուրժուական դեմոկրատիայի զենք՝ ԽՍՀՄ ներսում, և միջազգային սոցիալ-դեմոկրատիայի ոժանադակ ջոկատ՝ ԽՍՀՄ-յան սահմաններից դուրս։

2. Տակտիկայի բնագավառում ոպպողիցիան ուժեղացնելով ու սրելով կուսակցության դեմ իր աշխատանքները, վոչ միայն կուսակցության կանոնադրության սահմանից ե դուրս յեկել, այլ և անցել ե խորհրդային լեզության սահմանից (անկեզալ ժողովներ, անկեզալ տալարաններ, մամուլի անկեզալ որդաններ, շենքերի բոնի գրավում և այլն)։ Հակախորհրդային այս քաղաքականությունը պսակվեց այն բանով, վոր ոպպողիցիան բացարձակ պայքարի անցավ ընդդեմ պրոլետարիատի դիկտատուրայի ռեժիմի և կուսակցության ու խորհրդային իշխանության դեմ 1927 թ. նոյեմբերի 7-ին փողոցային ցույցեր կազմակերպեց։ Ոպպողիցիայի հակախորհրդային այն տակտիկան, վոր գործադրվում ե նաև արտասահմանում ու կապված ե ԽՍՀՄ դեմ մղվող զրպարտիչ ամբաստանության պրոպագանդի հետ, ոպպողիցիային փաստորեն դրել ե պրոլետարիատի դիկտատուրայի յերկրի բացահայտ թշնամիների շարքը։

3. Կազմակերպչական ինդիրների ասպարիզում ոպպողիցիան լենինյան տեսակետների վերաքննության վրա հենվելով, ֆրակցիոնականությունից իր սեփական արոցկիստական կուսակցությունն ստեղծելու գործին ե անցել։ Հանձնաժողովը միանդամայն բացահայտ կերպով յերեան ե բերել ոպպողիցիայի կենտրոնական կոմիտեյի, շրջանային, նահանգական, քաղաքային ու ոայնական

կենտրոնների տեխնիկական ապարատն, անդամավճարների, տպագիր որգանների և այլն և այլն առկայությունը։ Տրոցկիստական կուսակցությունն արտասահմանում կապ և հաստատել վոչ միայն հակառակնենյան ըմբռնումներ ունեցող ֆրակցիոն խմբակների հետ, վոր գոյություն ունեն կոմունիստական Խնտերնացիոնալի կուսակցությունների ներսում, այլ և այնպիսի կազմակերպությունների, խմբակների և առանձին անձանց հետ, վորոնք կոմունիստական Խնտերնացիոնալին յերբեք պատկանալիս չեն յեղել. նույնպես և կապ են հաստատել կոմինտերնից դուրս արված կոմունիստական շարժման թշնամիների ու դավաճանների հետ (Մասլով, Ռուտ Ֆիշեր, Կորշ, Սուվարին, Ռուանդ Գոլստ, Լիբերս և այլն և այլն). Ոպպոզիցիայի կազմակերպչական նման տակտիկայի հետևանքն այն յեղավ, վոր ԽՍՀՄ ներսում ոպպոզիցիան կազ հաստատեց բուրժուական անկուսակցական ինտելիգենտների հետ (Շերբակով և ընկերություն), վորոնք իրենց հերթին կապ ունեն բացարձակ հականեղափոխականների հետ, իսկ ԽՍՀՄ սահմաններից դուրս՝ բոլոր յերկրների բուրժուազիայի կողմից լայն պաշտպանություն գտավ։

Ցելակետ ունենալով այն ամենը, ինչ վոր վերը հիշվեց, XV համագումարը գտնում է, վոր 1927 թվի նոյեմբերի 14-ին Տրոցկուն ու Զինովյան՝ Համ. ԿԿ(Բ) շարքերից և ոպպոզիցիոն մյուս անդամներին՝ ԿԿ և ԿԿՀ կազմից հեռացնելով ու ոպպոզիցիայի հարցն ամբողջությամբ համագումարի քննությանը դնելով, ԿԿ ու ԿԿՀ իրավացի յեն վարվել։ Կենտրոնական կոմիտեյի հաշվետվության վերաբերյալ հանած իր բանաձևում համագումարը հայտարարում է, վոր արոցկիստական ոպպոզիցիային պատկանելը և այդ ոպպոզիցիայի տեսակետները քարոզելը Համ. ԿԿ(Բ) պատկանելուն անհամատեղելի յեն։ Այս պատճառով համագումարը գտնում է, վոր ոպպոզիցիան թե գաղափարապես զինաթափելուն ու նշանակում է՝ կուսակցության վորոշումները պաշտպանելուց հրաժարվել։

Պականապես և թե կազմակերպչորեն պետք ե զինաթափ լինի՝ վճռականորեն դատապարտելով իր (ոպպոզիցիայի) վերը հիշատակված տեսակետները՝ իբրև հակառակնենյան, իբրև մենշևիկյան տեսակետներ, և իր վրա վերցնի կուսակցության, նրա համագումարների, կոնֆերենցիաների և կենտրոնական կոմիտեյի տեսակետները պաշտպանելու պարտավորությունը։ Մակայն ոպպոզիցիան մերժեց կուսակցության այս պահանջը։ Ոպպոզիցիան իր՝ 1927 թվի գեկտեմբերի 3-ի փաստաթղթով (վորը ոպպոզիցիայի 121 ակտիվ գործիչներն են ստորագրել) վոչ միայն չի հրաժարվում, այլ և պնդում է իր մենշևիկյան տեսակետների պըոպագանդի վրա։ Կենտկոմի հաշվետվության առթիվ ընդուված ըանաձեից հետո հանձնաժողովն ոպպոզիցիայից ստացավ 1927 թվի գեկտեմբերի 10-ին գրված 2 փաստաթուղթ, վորոնցից մեկը (Ռակովսկու, Մուրալովի ու Ռազեկի ստորագրությամբ) պնդում է վոչ միայն մենշևիկյան այդ տեսակետները պահպանելու անհրաժեշտությունը, այլև այդ տեսակետները քարոզելու անհրաժեշտությունը, իսկ մյուս փաստաթուղթը (Կամենևի, Բակաևի, Յեղակիմովի և Ավգենեկի ստորագրությամբ) պնդում է ոպպոզիցիայի մենշևիկյան տեսակետների պահպանումը՝ հրաժարվելով այդ տեսակետների պըոպագանդից, մի հանգամանք, վոր հակառակ ունենալում է գաղափարապես զինաթափելուն ու նշանակում է՝ կուսակցության վորոշումները պաշտպանելուց հրաժարվել։

Արձանագրելով ոպպոզիցիոն 2 խմբակների միջև գոյություն ունեցող բացահայտ տարածայնությունը, համագումարությունը ոպպոզիցիայի 2 հայտարարությունն ել գտնում է միանգամայն անբավարար։ Ցելակետ ունենալով վերոհիշյալն ու նկատի առնելով այն, վոր ոպպոզիցիան Փրակցիոնականությունից հրաժարվելու հանդիպավոր խոստումները յերկիցս խախտել ե, համագումարը վորոշում է. — «Կուսակցությունից հեռացնել արոցկիստական ոպպոզիցիայի ակ-

տիվ գործիչներին։ Կուսակցությունից հեռացնել նաև Սապ-
րոնտիլի խմբակը՝ վորպես բացահայտորեն հականեղափոխա-
կան խմբակ։ Հանձնարարել կենտրոնին ու կենտրոնական
վերահսկիչ Հանձնաժողովին՝ տրոցկիստական ոպպոզիցիայի
շարքային անդամներին համոզելու նպատակով ամեն տե-
սակի միջոցներ ձեռք առնել՝ նրանց վրա գաղափարակա-
նապես ներգործելու համար, միաժամանակ մաքրելով կու-
սակցությունը տրոցկիստական ոպպոզիցիայի բացահայտո-
րեն անուղղելի տարրերից։

— Համագումարից 1 ամիս հետո, Զինովյան ու Կա-
մենկը (ինչպես նաև շատ ոպպոզիցիոներներ) «Պրավդա»
թերթում տպում են գրություններ, վորոնց մեջ զդում
են իրենց սխալները և XV համագումարի վորոշումները
համարում են ուղիղ։

ԿՈՄԻՆՏԵՐՆԻ VI ԿՈՆԳՐԵՍԻ ԸՆԴՈՒՆԱԾ ԲԱՆԱԳԵՎԸ
ՏՐՈՑԿՈՒ, ՌԱԴԵԿԻ, ՍԱՊՐՈՆՈՎԻ ՅԵՎ ՈՒՐԻՇՆԵՐԻ
ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ԱՌԹԻՎ

Վեցերորդ համաշխարհային կոնգրեսը, ծանոթանալով
Տրոցկու, Սապրոնովի և Համկոմկուսից վտարված ուրիշ
ոպպոզիցիոներների դիմումներին, վորով նրանք ինդրում
են իրենց վերընդունել կուսակցության մեջ, վորոշում եւ.

1. Համաշխարհային կոնգրեսն ամբողջովին հավանու-
թյուն եւ տալիս Համ. Կ. Կ. (բ.) 15-րդ համագումարի կար-
ծիքին և Կոմինտերնի Գործկոմի 9-րդ պլենումի բանաձեռն,
վորոնց համաձայն տրոցկիստական ոպպոզիցիային պատ-
կանելլ և նրա հայացքների պրոպագանդան անհամատեղելի
յեւ բալշեփիլան կուսակցության պատկանելու հետ. տրոց-
կիստական խմբակն իր ծրագրով ու քաղաքական և կազ-
մակերպչական հայացքներով գլորվեց մենշևիզմի դիր-
քերը և որյեկտիվորեն դարձավ Խորհրդային Խմանության
դեմ պայքարելու մի որգան։ Ուստի և այդ ոպպոզիցիայի
վտարումը Համկոմկուսից ճիշտ եր և անխուսափելի։

2. Համաշխարհային կոնգրեսին՝ վտարվածների աված
հայտարարությունը մի նոր առացույց եւ, վոր Տրոցկին և
նրա մի բուռն համախոհները, վորոնք չենթարկվեցին 15-րդ
համագումարի առաջադրած պայմաններին, ինչպես արե-
ցին ոպպոզիցիոների ահազին մեծամասնությունը, շարու-
նակում են իրենց պայքարը, իրենց պառակտիչ աշխատանքը
և իրենց զրպարտիչ կամպանիան՝ Համ. Կ. Կ. (բ.) և պրո-
լետարական դիկտատուրայի դեմ։

Կոնգրեսն ավելորդ եւ համարում վիճարանել Կոմու-
նիստական Խոտերնացիոնալի թշնամիների հետ՝ տրոցկիս-
տական պլատֆորմի քաղաքական հականեղափոխական բո-
վանդակության մասին, յերբ բոլոր կոմկուսների անդամ-

ների ամբողջ մասսան բազմիցս և ամենայն վճռականությամբ ժիսեց ոպղողիցիայի տեսակետը:

3. 6-րդ համաշխարհային կոնգրեսը հաստատում է Համ. կ. կ. (բ.) 15-րդ համագումարի վորոշումը տրոցկիստներին վտարելու մասին, ընդունում է նաև, վոր ոպղողիցիայի պարագլուխների վերաբերմամբ ձեռք առնված հետագա միջոցներն ամբողջապես բղխում ելին հեղափոխական անհրաժեշտությունից: 6-րդ համաշխարհային կոնգրեսը մերժում է Տրոցկու, Ռադեկի, Սապրոնովի և այլ վտարվածների դիմումը՝ կուսակցության մեջ ընդունվելու մասին:

ԽՍՀՄ ԺՈՂՈՎԱՐԴԻՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ,
ՀԱՅԿԱԿԱՆ ՍԵԿՑԻԱ.

ԼՈՒՅՍ ՏԵՍԱԾ ԳՐՔԵՐԻՑ ՊԱՀԵՍՏՈՒՄ ԿԱՆ ՀԵՏԵՎՅԱԼՆԵՐԸ

Սոցիալիզմի ուղին,—Ն. ԲՈՒԽԱՐԻՆ	1 ռ. 25 կ.
Ազգային Հարց,—Ի. ՍՏԱԼԻՆ	1 ռ. 60 »
Գյուղացիական Հարց,—Ի. ՍՏԱԼԻՆ	50 »
Լենինի պատգամները ծովովրդ. լուսավորության մասին	20 »
Լենինի պատգամները յերիտասարդության	15 »
Համ. Կոմկուսի (բ) պատմությունը,—Վ. ՎՈԼՍԵՎԻՉ . . 1 ռ. 50 »	
Ոպղողիցիոն հոսանքները Համ. Կու. Կուս. (բ) ներսում	20 »
Բոլցևլիկների կուսակցությունը 1917 ըվին,—	
ԵԵՄ. ՅԱԲՈԽԱՎՄԻՅԻՑ	85 »
Ինչ սկից Հոկտեմբեր բանվորներին,—Մ. ՏՈՒՄԿԻՑ . .	20 »
1905 թ. մեր I-ին բանվորա-զյուղացիական նեղափոխությունը,—Ի. ՖԼԵՐՈՎՍԿԻՑ	70 »
Քաղաքական բառարան,—կազմեց Վ. ԱԲՐԱՄՅԱՆ (656 էջ) 2 ռ. —	
Պատմական մատերիալիզմի ալբուրենը	80 »
Պայքարի յեվ ժինարարության 10 տարի,—ՆՈՎԱԿՈՎՍԿԻՑ	70 »
«Ի. ՍՏԱԼԻՆ» (համառ. կենսագր.)	7 »
Ինչպես աշխուժացնել զյուղացորհութեները,—Զ. ԼԱՎՐԵՆՑՅԵՎ	30 »
Պատերազմ չենք ուզում, բայց դիմադրելու պատրաստ ենք .	10 »
Ինչով և ուժեղ կարմիր բանակը,—ԶՈՐԻՆ	15 »
Տգիտությունը յեվ սնահավատությունը,—Վ. ԴԻՄԻՏՐԻՅԵՎ	15 »
Մերոդական ձեռնարկ (ուսուցիչների համար)	70 »
Նոր-դպրոցի նանապարհին	2 ռ. —
Հասարակագիտությունը Ի-ին ասինանի դպրոցում,—	
Բ. ԺԱՎՈՐՈՆԿՈՎ	65 »
Գեղջկունին յով յերեխաները	25 »
Ի՞նչպես և սարգված սիլեզերքը,—Գ. ԳՐԱՎԵ (նկարագ.)	50 »
Արելը, նրա վորդիները յեվ բոռները,—Բ. ՍԵՐԵՅԿԻՆ (նկ.)	40 »
Ինչպես և առաջացել յեվ զարգացել կյանքը յերկրի վրա,	
Ա. ԳՐԵՄՅԱՅԿԻ (նկարագադ)	50 »
Մարդու յեվ կենդանիների ծագումը,—Դ. ԱԳՈԼ (նկ.)	35 »
Մարդ-մենանականացությունը,—Մ. ԳՐԵՄՅԱՅԿԻ (նկարագադ)	»

Մարդու անտեսանիկի թշնամիներն ու բարեկամները,—

Լ. ԶԻԼԲԵՐ (նկարազարդ)	20 կ.
Վ. ԱՐԵՆՏ, կայծակ, ելեքտրականուրյուն, —ԴՐԵՄՑԱՑԿԻ (նկ.)	40 »
Պատանի Պիոներ (ժողովածու, նկարազարդ)	60 »
Պիոներ, հետեւիր Լենինի պատգամներին	20 »
Հոկտեմբեր (համառ. պատմ.)	10 »
Մեր ավագ յեղբայրները—Կոմիերիտականները	33 »
Հակոբ Պարոնյան (բնիք յերկեր), պրակ I	40 »
Հակոբ Պարոնյան » » » II	35 »
Հակոբ Պարոնյան » » » III	35 »
Պատմվածքներ, —Ա. ՍԵՐՍՖԻՐՈՎԻՉ	45 »
Մայր, —Ֆ. ԲԵՐԵԶՈՎՍԿԻՅ	45 »
«Չապայիվ», —Դ. ՅՈՒՐԻՄԱՆՈՎ	50 »
Հոկտեմբերյան պատմվածք, —Ա. ՅԱԿՈՎԼԵՎ	20 »
Հաղացան Ռտապայ, —Ա. ՖԼՈՐՈՎ	20 »
Գալլեր, —Ֆ. ԳԼԱԴԿՈՎ	25 »
Կանդալների Պատմուրյուն, —Ն. ԼՅԱՇԿՈ	20 »
Զորացող քելվեր, —»	25 »
Արտասովորը, —ՄԱ.ՔՄԻՄ ԳՈՐԿԻՅ	40 »
Մրցահավիլ յերգը, յեվ ուրիշ պատմ. —Մ. ԳՈՐԿԻՅ	15 »
Յերիտասարդ գրողը: Մարդը, —»	15 »
Թե ինչպես Սահն կարմիր բանակային դարձավ,—	
Ա. ԿՐԱՎՉԵՆԿՈ	35 »
Յերկրացարժ (պատմվածք), —Դ. ԿԼԱՅՍ	25 »
Ընկեր Վալյա, —Մ. ՅՈՒՐԻՆ	15 »

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ ԵՆ ՑԵՎ ՇՈՒՏՈՎ ՀՈՒՅՍ ԿՏԵՍՆԵՆ

Հեռագիր, հռոախոս, ուղիփ (նկարազարդ)

Զվարճալի պատմվածքներ «Աստվածաշնչից», 84 ծաղրանկարով,
Կրօնմերի ծագումը (նկ.) (մասսայական):

Ռազմի որեր, —Ն. ՈԼԵՅՆԿՈՎ,

Կառանկա, —Ա. ԶԵԽՈՎ

Քաղցրազիտուրյան դասազիրք (կոմս. խաղաքային դպր. համար):

(այս զիրքը առաջիկա 1928—29 ուսումն. տար. համար ե. I-ին
պրակն լույս է տեսել, իսկ II յեվ III պրակները մասմուկի տակ են):

Պահանջեցեմ մեր լրիվ գրացուցակը, վոր ուղարկվում է ձրի:

ՀՀ Ազգային գրադարան



NL0188475



20 ԿՈԴ.

37335

807

1
2



А. С.
**Оппозиционные
течения внутри ВКП(б)**

На армянском языке.

ЦЕНТРАЛЬНОЕ ИЗДАТЕЛЬСТВО НАРОДОВ С. С. С. Р.
Москва, центр, Никольская, 10.